ԴՈԿՏ. Տ. ԷԼՋԷՆՀԱՆՍ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Թարգմ. գերմաներէնի 4-րդ բարեփ. հրատարակութիւնից

ԱԲԷԼ ԱԲԵՂԱՅ

Միաբան Մ. Արոռ Ս. Էջմիածնի.

1912

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Էլէքտրաշարժ տպարան Մ. Աթոռոյ Ս. Էջմիածնի.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

2. Զգացմունք.

3. Կամք.

ՀԱՏՈՒԱԾ III.

Հոգու տարբեր տարրերի միմեանցից ունեցած կախումը.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այս գրքի թարգմանութեան նպատակը եղել է մասամբ բաւարարութիւն տալ այն կարիքին, որ խոբապէս զգալի է թէ հոգեբանութեամբ հետաքրքրուող և օտար լեզուներ չիմացող մարդու համար և թէ մեր այն դպրոցների սաների համար, որոնց հոգեբանութիւն է աւանդւում։ Մենք նպատակ ենք դրել նաև գոնէ մասամբ թեթևացնել այն դժուարութիւնը, որ առաջ է գալիս մի շարք առարկաներ տեսրակներով կամ առանց որ և է ձեռնարկի սովորելուց։ Այդպէս աւանդւող առարկաների թուին է պատկանում նաև հոգեբանութիւնը։ Մենք ի հարկէ, չենք վստահանայ առաջարկել այս թարգմանութիւնը մեր դպրոցների համար իբրև դասագիրք՝ առանց գիտակ անձանց կարծիքը լսելու, սակայն ընդունում ենք, որ այս երկը ունի աչքի ընկնող մի առաւելութիւն. ունենալով համառօտ ծաւալ՝ այս թարգմանութիւնը հնարաւորութիւն կը տայ հոգեբանութիւն սովորող աշակերտներին տեղեկանալու այդ գիտութեան՝ որպէս մի լիակատար սիստեմի հետ, քանի որ մեր դպրոցներում համարեա թէ երբէք հոգեբանութիւնը չի աւանդւում որպէս լիակատար սիստեմ. և աշակերտը չի իմանում, թէ հոգեբանութեան՝ որպէս սիստեմի, երկու ծայրերը որոնք են։

Շնորհիւ այն հանգամանքի, որ մեր լեզուով գիտական գրականութիւնը դեռ չէ զարգացած, թարգմանութեան ընթացքում մի երկու տեղ անհրաժեշտ համարեցինք նոյն իսկ գերմաներէն բառը թողնել նոյնու-

թեամբ, ինչպէս կտեսնի գրքիս ընթերցողը։ Շատ անգամ էլ հայերէնի կողքին դրինք նաև գերմաներէն բառը, որպէս զի գերմաներէն իմացողներն աւելի մօտիկից ծանօթանան արտայայտութեան նրբութեանը։ Այս բոլորն ի նկատի ունենալով՝ աշխատեցինք նաև, որ մեր թարգմանութիւնը լինի հարազատ և չշեղուի բնագրից· իսկ թէ որչափ է յաջողուել մեզ մեր նպատակին հասնել, այդ ցոյց կտայ կոմպետենտ քննադատը։

Աբել Աբեղայ.

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

«Էմպիրիկ» եւ «ռացիոնալ» հոգեբանութիւն.

Աւանդաբար տարբերութիւն են դնում էմպիրիկ և ռացիոնալ հոգեբանութեան միջև, որոնցից առաջինը շարադրում է մարդկային հոգու գործունէութեան արտայայտութիւնները իրենց օրէնքներով, իսկ երկրորդը ձգտում է հոգու ներքին էութիւնը հիմնաւորել և այն գործունէութեան արտայայտութիւնները դրանով պարզաբանել։

Ռացիոնալ հոգեբանութիւնը թեակոխում է ընազանցագիտութեան սահմանը, որովհետև նա հարց է դնում հոգու փոփոխութեան և գոյութեան եղանակի, մարմնի հետ ունեցած կապակցութեան և դէպի ժամանակն ու միւս հոգիներն ունեցած յարաբերութեան մասին։

Սակայն ընազանցագիտութեան անհասանելիութեան պատճառով անհրաժեշտ է նախ և առաջ զուտ էմպիրիկ եղանակով դիտողութեան հողի վերայ հետազօտել և շարադրել հոգեկան կեանքի իրողութիւնները և սրանց օրինաւոր կապակցութիւնը։ Այս եղանակով հոգեբանութիւնն սկզբում պէտք է ներքին փորձի

ամուր հողի վերայ պարզորոշ հասկանայ և գտնէ իւր մերձաւոր փորձնական խնդիրը՝ մերժելով առժամապէս բնազանցագիտական ամեն մի խորհրդածութիւն. և միայն այս դէպքում հոգեբանութիւնը կարող է յաջողութեան յուսով առաջ գնալ՝ իւր խնդիրներն աւելի խորը հասկանալու, այլև ուրիշ հոգեգիտութիւնների իդէալների համար շաղկապման կէտեր մատակարարելու։ Փորձի և բնազանցութեան հէնց այս կտրուկ զատմամբ է գիտական վերաբերմունքը տարբերւում դոհիկ հասկացողութիւնից, որը երկուսն էլ խառնում է. և օրին. համար, հոգեկան երևոյթները առանց այլևայլութեան բնազանցօրէն որպէս մի իրի գործողութիւններ և վիճակներ է բացադրում, մարմնական աշխարհի նմանօրինակութեամբ։

Մեր նպատակի համար բաւական է էմպիրիկ հոգեբանութիւնը։

— ⁂ —

ՀԱՏՈՒԱԾ I.

ՀՈԳԻ ԵՒ ՄԱՐՄՆԻ

Զանազան հայեացքներ հոգու եւ մարմնի յարաբերութեան մասին.

Փորձը հոգեկան կեանքի երևոյթները մարմնական երևոյթներին սերտ կապուած է ցոյց տալիս մեզ։ Այդ պատճառով հոգեբանութիւնն ստիպուած է յաճախ այն գիտութիւնների աջակցութեանը դիմել, որոնք զբաղւում են մարդկային մարմնով.—անատոմիայի՝ այսինքն բուսական և կենդանական օրգանիզմի կազմակերպութեան գիտութեան, և բնախօսութեան, այսինքն՝ բուսական և կենդանական մարմինների կենսական երևոյթների գիտութեան։

Վերջերս այնքան շատ ուսումնասիրուող բնախօսական հոգեբանութիւնն անմիջական եզրակացութիւններ է հանում այս վերջին գիտութիւնից հոգու և մարմնի յարաբերութեան համար։

Սակայն փորձի այս երկու շրջանների վերջին կապակցութիւնն անկարող ենք ոչ դիտել, ոչ էլ ներքնապէս վերահասու լինել։ Մի ձայն լսելիս ոչինչ չենք գիտակցում, թէ նա ինչ ճանապարհ է անցել սկսած լարերի տատանումից մինչև զգայութիւնը, և ոչ մի որոշ եղելութեան ուղիղ մէջ վերահասու չենք լինում, երբ մի վճիռ ենք կայացնում։ Սակայն հոգեկանին համապատասխանող մարմնական եղելութիւնը եթէ

նոյն իսկ անմիջապէս դիտել կարողանալինք, դարձեալ չէինք իմանալ, թէ ինչպէս է լինում, որ ձայնի ալիքների միջոցով առաջացած նեարդային գրգիռը փոխւում է ձայնի զգայութեան, կամ վերջին ինչպէս է սկսում մարմնի անդամները շարժման մէջ դնել։

Այս պատճառով բազմազան ենթադրութիւններ (հիպոթէզներ) կան առաջադրուած հոգու և մարմնի այս յարաբերութեան մասին։ Այդ բոլոր ենթադրութիւնները կարելի է չորս գլխաւոր տիպի վերածել. — կամ բոլորովին դուրս են ձգում կապակցուելիք երկու անդամներից մէկը, որով երկու հնարաւոր հայեացք է առաջ գալիս 1) հոգին լոկ մի ձև է կամ արտադրութիւն մարմնի (մատերիալիզմ) և 2) մարմինը լոկ մի ձև է կամ արտադրութիւն մէկ կամ շատ հոգևոր էակների (սպրիտուալիզմ, օրինակ Լայբնիցը, Լոցցէն). կամ թէ չէ ընդունում են երկուսի էլ անկախութիւնը, որով հնարաւոր են երկու ուրիշ տեսութիւններ. 3) հոգին և մարմինը փոխադարձաբար ազդում են միմեանց վրայ, որպէս տարբեր էութիւններ կամ սուբստանցներ (փոխազդեցութեան ուսմունք, օրինակ Դեկարտը, Հերբարտը), 4) հոգին և մարմինը միևնոյն էութեան արտայայտութեան տարբեր ձևեր են, ուստի պատճառի և հետևանքի ոչ մի յարաբերութեան մէջ չեն գտնւում (նոյնականութեան հիպոթէզ, օրինակ Սպինոզան, Ֆեխները. նորագոյն հոգենիւթական զուգակցութիւն)։

Փորձնական (էմպիրիկ) հոգեբանութիւնը իւր տեսակէտից չի կարող պատասխանել այդ հարցին, այլ միայն դրա համար նիւթ մատակարարել. հարցի վերջնական պատասխանը կախուած է որոշ բնազանցագիտական հայեացքներից։ Էմպիրիկ հոգեբանութիւնը կարող է միայն հոգու և մարմնի փաստական տարբերութիւնն արձանագրել և հետազօտել փորձի այդ երկու շրջանների միջև օրէնքներով որոշուած յարաբերութիւնները, որչափ որ դրանք դիտողութեան ենթարկուել կարող են։ Այս խնդիրների լուծմամբ զբաղւում է ամբողջ հոգեբանութիւնը. սակայն պէտք է առաջուց ցոյց տալ հոգեկան և մարմնական երևոյթների ամենաէական տարբերութիւնն ու յարաբերութիւնը, որոնք ամենից առաջ նեարդային համակարգութեան մէջ են կատարւում։

Մարմնական եւ հոգեկան երեւոյթների յատկանիշը.

Այն գլխաւոր նշանները, որոնցով մարմինը և հոգին փորձնականօրէն տարբերւում են միմեանցից, հետևեալներն են. նախ մարմնական աշխարհի համար.

1) Մարմնական երևոյթները հանդէս են գալիս տարածութեան ձևով, մինչդեռ տարածական բնոյթ չունի ոչ մի հոգեկան եղելութիւն, և ոչ իսկ մեր մտապատկերները տարա-

ծութեան մասին. օրինակ, եռանկեան մասերը ինքը եռանկիւնաձև չէ։

2) Բնագիտութիւնն ընդունում է որ մարմնական աշխարհը ենթարկուած է հետևեալ օրէնքներին։ Նախ՝ իներցիայի օրէնքը՝—ամեն մարմին ձգտում է մնալ հանգստի կամ շարժման՝ իւր դրութեան մէջ, քանի որ մի ներգործող ոյժ չի ստիպել նրան փոխելու այդ դրութիւնը։ Երկրորդ՝ նիւթի և ոյժի պահպանման օրէնքը՝—նիւթի մասերի գումարը, իրենց դասաւորման բոլոր փոփոխութիւնների ընթացքում, այլ և ոյժի գումարը, հանգչող և գործող ոյժի բոլոր փոփոխութիւնների ժամանակ, մնում են նոյնը։ Օրգանական կեանքն ու մարդկային մարմինն էլ պէտք է ենթարկուած լինին այս օրէնքներին. կեանքը, հետևապէս, պէտք է վերագրուի ոչ թէ ինչ որ անբացադրելի կենսական ոյժի, այլ մարդկային մարմնի մէջ շաղկապուած զանազան նիւթերի և ոյժերի չափազանց խճճուած, տակաւին բաւարար չուսումնասիրուած փոխազդեցութեանը։

Այս օրէնքների կիրառումը հոգեկան աշխարհի համար մինչև այժմ դեռ չի ապացուցուած. ընդհակառակը, այս աշխարհի յատկանիշները բոլորովին այլ տեսակ են.

1. Հոգեկան գիտակցութիւնը պայմանաւորւում է փոփոխութեամբ, բազմազանութեամբ և հակադրութեամբ։ Պարզ տպաւորութեան հաւասար չափով տևող ներգործութիւնը թուլացնում է գիտակցութիւնը, և եթէ հեռացնենք միւս տպաւորութիւնները, ապա կառաջանայ քնած կամ անգիտացած վիճակ։ Այսպէս օրինակ հիպնոզացած դրութիւն է առաջանում, երբ ուշադրութիւններս կենդրոնացնում ենք միայն մի հատիկ կէտի վրայ, օրինակ, տեսողութիւնը յառելով մի որ և է փայլուն առարկայի վրայ, կամ լսողութիւնն զբաղեցնելով միատեսակ շշուկով։ Նման վիճակի մէջ է ընկնում նաև կրօնական միստիկը, երբ խորասուզւում է Աստուածութեան՝ իբրև մի բացարձակ միութեան մէջ։

2) Գիտակցութեան այս բազմազան տարրերը միմեանցից անջատ չեն հանդէս գալիս հոգու մէջ, որպէս զի նորից անհետանան, այլ ազդելով միմեանց վրայ առաջ են բերում նոր երևոյթներ և կապակցւում են գիտակցութեան միութեան մէջ։ Բայց այս հնարաւոր է շնորհիւ միայն այն բանի, որ հոգու նախկին վիճակները հաստատուն կերպով պահւում են, կամ եթէ անհետացել են, նորից առաջանալ կարող են։ Սակայն միայն այս չէ, որ տալիս է գիտակցութեան միութիւն։ Նախկին վիճակների այսպիսի պահպանումներ և կրկին յառաջացումներ տեղի են ունենում նաև անգիտակից ընութեան մէջ։ Եթէ ժամանակային տեսակէտից միմեանց յաջորդող հոգեկան վիճակների մէջ գոյութիւն ունի ներքին կապ, ապա որպէս զի նախկին վիճակները որոշ յարաբերութեան մէջ դրուեն յաջորդների հետ, անհրաժեշտ է, որ նոքա կրկին ճանաչուեն. այս պատ-

ճառով յիշողութիւնը հոգու ամենաէական ընդունակութիւնն է։ Միայն յիշողութեան շնորհիւ կարելի է միաժամանակ առաջ բերել և կապակցել հոգեկան գործողութիւններ, որոնք առանց սրան կներկայանային որպէս առանձին, միմեանց նկատմամբ բոլորովին անտարբեր երևոյթների մի որոշ քանակութիւն։

Գիտակցութեան այս ներքին միութիւնը, կապուած նրա տարբերի ազատ փոխազդեցութեան հետ, հոգեկան առողջութեան գլխաւոր պայմանն է։ Եթէ այս կապն ընդհատւում է, կամ թէ կազմւում որևէ idées fixes, որոնք արգելք են հանդիսանում գիտակցութեան տարբերի ազատ փոխազդեցութեան, ապա այս նշան է սկսող կամ արդէն գոյութիւն ունեցող հոգեկան հիւանդութեան։

Մատերիալիզմը միանգամայն անկարող է բացատրել հոգեկան կեանքում եղած միութեան և բազմազանութեան այս առանձնայատուկ կապակցութիւնը։ Մինչդեռ մարմնական ատոմների երկու շարժումից առաջացած երրորդ շարժման ժամանակ նախկինները ընդհատւում են, գիտակցութեան միութիւնը միացնում է նախկին մտապատկերները յետինների հետ, առանց որ այդ մտապատկերները նրա մէջ լուծուէին (անհետանային)։

Նեարդային համակարգութիւն.

Հոգեբանական և բնագիտական դիտողութիւնը ցոյց է տալիս, որ մարմնի ոչ բոլոր բաղկացուցիչ մասերը հոգու նկատմամբ հաւասարաչափ սերտ առընչութեան մէջ են։ Նրա հետ անմիջական յարաբերութեան մէջ են միայն նեարդերը, որոնք անցնում են մարմնի ամբողջ օրգանիզմով, նման սպիտակ թելերի։ Բազմաթիւ նեարդային թելիկներ միանում են կենդրոնական օրգաններում, որոնք իրենց կողմից կապուած են գլխաւոր կենդրոնական օրգանի՝ ուղեղի հետ (մեծ ուղեղի նեարդային բջիջների թիւը մօտաւորապէս 1 միլիարդ են հաշուում)։ Այսպիսով բոլորը միասին կազմում են մի սիստեմ, որի միջոցով միայն տեղի է ունենում մարմնի և հոգու ամեն մի փոխադարձ յարաբերութիւն։ Զգացող նեարդերը հաղորդում են արտաքին աշխարհի և մեր սեփական մարմնի, որն այստեղ նկատւում է որպէս այդ աշխարհի մաս, տպաւորութիւնները ուղեղին, իսկ շարժող նեարդերը ծառայում են այն նպատակին, որ շարժումների նկատմամբ եղած հրամանը հաղորդեն գործադիր անդամներին։

Հոգու տարբեր տեսակի գործողութիւնները այս նեարդային համակարգութեան, յատկապէս ուղեղի հետ կապելու փորձերը (լոկալիզացիայի տեսութիւն) դեռ ոչ մի հաստատուն արդիւնքի չեն հասել։ Հոգեկան գործողութեան տարբեր

տեսակների այս ձևի մանրամասն «լոկալիզացիա» անելը, ինչպիսին շարադրել է Գալլ (մահ. 1824 թ.) իւր գանգաբանութեան մէջ, անհնարին երևաց, որովհետև կարելի չեղաւ ընդունել ոչ գանգի ուռոյցքներից հանած այն եզրակացութիւնը, թէ այդ ուռոյցքների տակ գտնուող ուղեղի մասերն աւելի զարգացած են, և ոչ էլ այդպիսի եզրակացութեան վրայ հիմնուած հոգեբանական գաղափարների ոչ գիտական սահմանումը։ Բայց և այնպէս յաջողուեց ցոյց տալ, որ լեզուի և խօսելու կարևորագոյն կենդրոնական օրգանների տեղը գտնուում է մեծ ուղեղի ձախ կիսագնդի երրորդ ծալուածքի մէջ։ Ճիշտ այսպէս էլ զգայական ըմբռնումների տարբեր տեսակները, յատկապէս տեսողութիւնը, լսողութիւնը և մկանային շարժումները վերաբերում են ուղեղի որոշ մասերին՝ տեսողական, լսողական և շարժողական կենդրոններին։ Սրան հակառակ համարեա բոլորն ընդունում են, որ ուղեղի բարձր ֆունկցիաները՝ մտքերը, զգացմունքները, կամքի վճիռները կապուած չեն ուղեղի որոշ մասերի հետ։

ՀԱՏՈՒԱԾ II.

ՀՈԳԵԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԱՐՐԵՐԸ

Այսպէս կոչուած «հոգեկան կարողութիւններ»։

Հոգեկան կեանքի երևոյթներն ընդհանրապէս պարզաբանուում են՝ ընդունելով հոգեկան երեք կարողութիւնների՝ իմացութեան, զգացմունքի և կամքի գոյութիւնը։ Հոգեկան եղելութիւնների այս ձևի երեք շրջանների բաժանելը համարեա ընդհանուր ընդունուած է։—Այս կարողութիւններից մէկը միւսներից, կամ բոլորը մէկից բըղխեցնելու փորձերը (այսպէս օրինակ. Հերբարտն աշխատում է բոլոր հոգեկան պրոցէսները պատկերացումներից բղխեցնել) դեռ ևս տևում են, բայց նոքա դեռ չեն հասել ոչ մի բաւարար հետևանքի։ Սակայն չպէտք է անտես առնել երկու կարևոր հանգամանք, որոնք մասամբ վերաբերում են «կարողութիւն» արտայայտութեանը, մասամբ էլ երեք շրջանների բաժանելուն։

1). Ընդունելով որ կան հոգեկան երեք կարողութիւններ, դրանով հոգու գործողութիւնները չեն բացադրուում, այլ դասաւորուում են, որովհետև առանց մանրամասն ապացոյցի մի առարկային մի որ և է բան կատարելու կարողութիւն վերագրելը դեռ չի նշանակում բացադրել այդ երևոյթը։ Էմպիրիկ կերպով մենք կարող ենք դիտել միայն հոգեկան գործողութիւնները և այն

տարբերությունները, որոնց հիմամբ մենք նոցա դասերի ենք բաժանում։

2). Հոգեկան գործողությունների այս երեք դասերը՝ իմացություն, զգացմունք և կամք, չեն ծագում հոգու մէջ միմեանցից անջատ։ Հազիւ թէ գոյություն ունենայ այնպիսի հոգեկան վիճակ, որի մէջ յիշեալ երեք կարողություններն էլ չլինին։ Հետևապէս մենք իրաւունք ունենք խօսելու միայն այնպիսի հոգեկան վիճակների մասին, որոնց մէջ գերակշռում են կամ իմացությունը, կամ զգացմունքը և կամ կամքը։ Այս պատճառով երբ մենք յետագայում դիտենք հոգեկան կեանքի այս տարրերը զատ զատ, այնուամենայնիւ երբեք չպէտք է մոռանանք, որ այդպիսով մենք գիտության մէջ մտցնում ենք արուեստական բաժանում, որը գոյություն չունի իրականության մէջ։

---

1. ԻՄԱՑՈՒԹԻՒՆ

Զգայութիւն.

Իմացության ամենապարզ տարրը, ամենապարզ միջոցը, որով հոգին ծանօթանում է արտաքին աշխարհի հետ, է զգայությունը։ Վերջինս պէտք է տարբերել զգացմունքից՝ հաճելիության և տհաճության վիճակներից. նա իւր մէջ պարփակում է երեք գլխաւոր մոմենտ.

1) Արտաքին զգայարանական գրգիռ։ Որպէսզի զգայարանները գործունէության մէջ մտնեն, անհրաժեշտ է որ նոցա վրայ ներգործություն լինի մի որ և է առարկայից, որը կամ անմիջապէս ինքը մարմինը շօշափի, կամ թէ իւր և մարմնի միջև եղած մի այլ իրի շարժումով մարմնի վրայ ազդի։ Առաջինը պատահում է, օրինակ, շօշափողական զգայությունների դէպքում, իսկ երկրորդը՝ տեսողության, լսողության, որոնց օրգանները գործունէության մէջ են մտնում իրերի և օդի տատանումների շնորհիւ։

2) Մարմնի միջի որ և է զգացողներգրի գրգռուելը, որը առաջ է գալիս արտաքին գրգիռի ազդեցությամբ և պերիֆերական նեարդերի ծայրերից հաղորդւում է ամբողջ նեարդային համակարգության կեդրոնին՝ ուղեղին։ Եթէ կտրենք նեարդը, ապա զգայություն չի առաջանայ։

3) Զգայությունն հէնց հոգու մէջ՝ տեսնելը, լսելը, շօշափելը, հոտոտելը։

Բայց այս զգայությունները բոլորովին նման չեն վերոյիշեալ 1 և 2 պրոցէսներին, որոնցից նոքա առաջանում են։ Չի կարելի ապացուցել, թէ ինչու օդի տատանումներին հետևում է յատկապէս լսողության զգայությունը. մենք կարող ենք միայն հաստատ կերպով արձանագրել, որ այդ այդպէս է։ Զգայության կախուած լինելը արտաքին գրգռից, համապատասխան վերջինիս ոյժի աստիճանին, նոյնպէս միայն անուղղակի ճանապարհով

է յաջողուել հաստատել։ Միայն զգայութեան հիման վրայ մենք հաստատապէս չենք կարող ասել, թէ օրինակ, լոյսի որ և է a աղբիւրը, որի ոյժը $1^1/_2$ անգամ աւելի է միւս B աղբիւրից, $1^1/_2$ անգամ էլ աւելի պայծառ է լուսաւորում, քան B-ն։ Այս պատճառով պէտք եղաւ սկսել այն հարցից, թէ քանի անգամ արտաքին գրգիռը պէտք է ուժգացուի, որպէս զի նրան համապատասխան զգայութեան զօրեղացումն էլ նկատելի լինի։ Երևաց, որ գրգռի աճեցումը, որն արդէն զգայութեան նկատելի փոփոխութիւն է առաջ բերում, միշտ միևնոյն յարաբերութեան մէջ է այն գրգռի նկատմամբ, որին ինքը կցորդւում է (վեբերի օրէնք), և կամ եթէ հանրահաշուօրէն արտայայտենք՝ գրգռի ոյժը պէտք է աճի երկրաչափական յառաջատութեամբ, որպէսզի զգայութիւնն աճի թուաբանական յառաջատութեամբ։ Հետևապէս եթէ 3 կիլոգրամանոց քարի վրայ անհրաժեշտ է աւելացնել 1 կիլոգրամ, որպէսզի ճնշման աւելանալը նկատելի դառնայ, ապա ուրեմն 9 կիլոգրամանոց քարի վրայ անհրաժեշտ է 3 կիլոգրամ աւելացնել, որովհետև 1 կիլոգրամը ճնշման զգայութեան ոչ մի զօրեղացում չի առաջացնի։ Զանազան զգայութիւնների համար այսպէս կոչուած այս «նկատելի տարբերութիւնների մեթոդը» տարբեր յարաբերութիւններ է տալիս.—ձայնի զգայութիւնների համար (այստեղ տուեալների մեծ մասը միմեանց համապատաս-

խան են) մօտաւորապէս 3:4, լոյսի զգայութիւնների համար՝ 100:101, ճնշման զգայութեան համար՝ միացած մկանային զգայութեան հետ—15:16.

Բացի այս կան նաև սուբյեկտիւ զգայութիւններ։ Թէև այս վերջինները չեն առաջանում համապատասխան զգայական գրգիռներից, այլ մեքենայական ազդեցութիւնների, ինչպէս հարուածի, ճնշման և կամ մարմնի ներքին վիճակների շնորհիւ, այնուամենայնիւ նոքա կրում են այն ինքնատիպ բնաւորութիւնը, որը յատուկ է միայն իւրաքանչիւր զգացող նեարդի («իւրայատուկ զգայարանական էնէրգիա») և դրա համար յաճախ փոխադրւում են արտաքին աշխարհի վրայ. այսպիսիներից են օրինակ, ականջում ձայն տալը, աչքերին երևացող կայծերը, ցուրտը և տաքը տենդի ժամանակ։ Այս իրողութիւնը տարաւ դէպի Յովհաննէս (1826 թ.) Միլլերի միջոցով հիմնաւորուած իւրայատուկ զգայարանական էնէրգիան, այսինքն որ իւրաքանչիւր առանձին զգացող նեարդ ընդունակ է նոյնիսկ տարբեր գրգիռների ժամանակ միայն իրեն յատուկ զգայութիւն առաջ բերելու։

Բացի դրանից զգայութիւնները յաճախ շարունակւում են, եթէ նոյն իսկ գրգիռներն արդէն դադարել են։

Զգայութիւնները լինում են կամ պարզ, օրինակ՝ մի գոյն, մի ձայն, կամ թէ բարդ, օրինակ՝ ծիածանը, որի տարբեր գոյները մենք

տեսնում ենք միաժամանակ, կամ երաժշտական մի գործիք, որը միաժանակ թէ տեսնում և թէ լսում ենք։

Մտապատկեր եւ ըմբռնում.

Թէպէտ և զգայութիւնն իրեն պատճառ դարձած գրգռի հետ զաղարում է, բայց և այնպէս գիտակցութեան համար դեռ չի կորչում։ Նա կարող է նորից առաջ գալ հոգու մէջ որպէս յիշողական պատկերի մի ձև, բայց այս դէպքում նրան պակասում է առաջին ապաւորութեան զգայութեան կենդանութիւնը, և նա կոչւում է մտապատկեր։ Յիշողութեան մէջ ապաւորութիւնների այս ձևը տեղի է ունենում յատկապէս այն ժամանակ, երբ կրկնւում է ինքը՝ զգայութիւնը։ Այսպէս օրինակ՝ եթէ ես ծանօթ լինելով մէկի դէմքին, ձայնին, քայլուածքին, և այլն, ճանաչում եմ նրան, ապա ես կարող եմ նրա մասին մտապատկեր ունենալ, առանց տեսնելու նրա դէմքը, քայլուածքը և առանց լսելու նրա ձայնը. բայց հէնց որ կրկին անգամ կրեմ այդ զգայութիւնները, իսկոյն նոցա մասին յիշողութիւն առաջ կգայ, և ես կգիտակցեմ, որ նոր զգայութիւնները հաւասար են նախկիններին, այսինքն իմ մէջ կկատարուի ըմբռնումն։ Զգայութեան և ըմբռնման այս տարբերութիւնը յատկապէս այն ժամանակ է պարզ կերպով երևան գալիս, երբ զգալու ընդունակութիւնը պահուել է, իսկ ըմ-

բռնելունն արդէն կորել, ինչպէս օրինակ որոշ հոգեկան հիւանդութեան ժամանակ—Wortblindheit, բառի կուրութիւն,—երբ լսում են արտասանած բառերը, տեսնում են գրուած տառերը, բայց չեն հասկանում նոցա նշանակութիւնը, այսինքն՝ զրկուած են այդ բառերին ու տառերին պատկանող մտապատկերների վերարտադրման կարողութիւնից։ Նորմալ մարդու զգայական ապաւորութիւնը իսկոյն որոշ յարաբերութեան մէջ է մտնում գիտակցութեան ճնացեալ բովանդակութեան հետ և այսպիսով զգայութիւններով ձեռք բերուած հում նիւթը վերամշակւում է ըմբռնողութեան մէջ։ Որովհետև ընդհանրապէս զգայութիւնը հենց որ հասնում է գիտակցութեան, ապա անմիջապէս փոխւում է ըմբռնման, ուստի և այս երկու գաղափարներն էլ յաճախ նոյնանում են։

Վերարտադրուած մտապատկերի նոր զգայութեան հետ ձուլուելը գիտակցական աշխատանք չէ ըմբռնողի համար, այլ դա տեղի է ունենում անկամ կերպով։ Այն մտապատկերը, որն այս պրոցէսին մասնակցում է, գիտակցութեան չի հասնում որպէս ինքնուրոյն տարր և, այդ պատճառով, կոչւում է նաև «կապուած մտապատկեր»։ Այսպիսով այն մտապատկերներն են կոչւում «ազատ մտապատկերներ», որոնք երևան են գալիս գիտակցութեան մէջ, առանց զգայութիւններից առաջացած լինելու։ Փիլիսոփայութեան մէջ «մտապատկեր»

բառը յաճախ գործ է ածւում նաև աւելի ընդարձակ իմաստով, ընդհանրապէս որոշելու գիտակցութեան ամեն մի բովանդակութիւն, որ վերաբերում է արտաքին աշխարհի առարկաներին, նոցա յատկութիւններին կամ վիճակներին։ Այս դէպքում «մտապատկեր» բառն ընդգրկում է ինչպէս ըմբռնումները, այնպէս և մտապատկերները, վերոյիշեալ իմաստով առած, և իրեն համար յատուկ պարզ արտայայտութիւն է գտնում իմացաբանութեան հետևեալ հիմնական սկզբունքի մէջ՝ աշխարհն իմ մտապատկերն է (Կանտ, Շոպենհաուեր)։

Մտապատկերների ընթացքը.

Զգայութեան հետ կապ չունեցող ազատ մտապատկերները կազմում են գիտակցութեան ինքնուրոյն բովանդակութիւնը։ Բայց մտապատկերների այս աշխարհը շարունակ մտնում են նոր զգայութիւններ, և ուրեմն նոր մտապատկերներ։ Այսպիսով մեր հոգու մէջ պրոցէսների երկու զուգընթաց շարքեր նախապատրաստման համար մշտական պայքարի մէջ են։

Զբօսանքի ժամանակ, օրինակ, կարող է պատահել, որ սկզբում առաջին տեղը բռնէ շրջակայքի ըմբռնումը, այս պրոցէսի հետ կապուած փոփոխուող զգայութիւնների հետ միասին։ Բայց ահա այդ շրջակայքի և զբօսնողի տեսած որ և է

նախկին տիպի միջև եղած նմանութիւնը նրա հոգու մէջ առաջ է բերում նախկին դէպքերի յիշողութիւններ, և նրա մտքերը բոլորովին այլ ընթացք են ստանում. արտաքին տպաւորութիւնները շարունակ աւելի ու աւելի յետ են մղւում, և զբօսնողը խորասուզուելով իւր յիշողութիւնների մէջ, այլ ևս հազիւ թէ ուշադրութիւն է դարձնում այն ճանապարհի վրայ, որով գնում է, մինչև որ մի որ և է աչքի ընկնող, ուշադրաւ երևոյթ չի ընդհատում նրա մտքերի ընթացքը։ Այս շարքերից մէկի գերակշռութիւնը միաժամանակ և ծառայում է որպէս նշան մարդկանց մէջ եղած տարբերութիւնների։ Ոմանք մարդիկ աւելի հակուած են անձնատուր լինելու զգայութիւնների խաղին և արտաքին աշխարհի ըմբռնողութեանը. այսպիսիք են՝ երաժիշտները, գեղարուեստագէտները, բնախոյզները. ուրիշներն աւելի սիրով յանձնւում են ազատ մտապատկերների հոսանքին և նուիրւում այնպիսի գիտութիւնների, որոնք զբաղւում են հոգու կեանքով։ Բայց եթէ մէկի հետաքրքրութիւնն ամբողջովին այս շարքերից մէկն ու մէկով է ընթանում, ապա այդպիսի մարդու հոգեկան կեանքը ենթակայ է հիւանդոտ միակողմանիութեան։

Մտապատկերների ընթացքը երկու հարց է առաջ բերում՝ ինչպէս են առաջանում մտապատկերները գիտակցութեան մէջ և ինչպէս են անհետանում գիտակցութիւնից։ Ինչ չափով որ մտապատկերներն զգայութիւններից են ծա-

գում, այդ հարցերի պատասխանը պարզ է, այն է՝ մտապատկերները ծագում են և անհետանում արտաքին գրգռի սկսուելով ու դադարելով։ Բայց մտապատկերների այս տեսակ ծագելը և անհետանալը տեղի է ունենում ոչ միայն զգայութիւնների ազդեցութեան տակ, այլ և վերջիններից անկախ (ազատ մտապատկերները)։ Բայց որովհետև այս վերջին դէպքում երբէք չի կազմուում անպայման նոր մտապատկեր, այլ երևակայութեան օգնութեամբ հներն են նոր կապակցութեան մէջ մտնում, ապա վերոյիշեալ հարցերից մէկը պէտք է ձևափոխուի հետևեալ կերպով՝ ինչպէս են վերադառնում արդէն մի անգամ անհետացած մտապատկերները։

Բայց որովհետև վերջինս հանդէս է գալիս որպէս հաստատուն իրողութիւն, ապա ընդունուում է, որ մտապատկերներն, ընդհանրապէս, բոլորովին չեն անհետանում հոգուց, այլ պահուում են, եթէ ոչ գիտակցութեան մէջ, գէթ որպէս չգիտակցուող վիճակներ։ Մենք ունենք նոյնպէս յատուկ նշաններ, որոնք ցոյց են տալիս հոգու մէջ «գիտակցութեան շեմքի տակ» (Հերբարտ) տեղի ունեցող պրոցէսներ, որոնց թուին պատկանում են յարաբերութիւնների անմիջական ըմբռնումը, որը, ճիշտն ասած, ենթադրում է միջնորդող անդամների մի շարք, ինչպէս օրինակ առարկայի հեռաւորութեան ըմբռնումը (տես ցածում), կամ զգացմունքների աշխարհը, որոնց ծագումը յաճախ պարզ չէ։ Գիտակցութեան շեմքի

տակ կատարուող այս պրոցէսների մասին մենք չենք կարող որևէ որոշ բան ասել, բացի այն, որ նոքա կատարուում են գիտակցութիւնից դուրս. որովհետև նոցա միայն այն դէպքում կարելի էր դիտել, եթէ գիտակցութեան առարկայ լինէին։

Գիտակցականի և անգիտակցականի միջին դրութիւնն է երազական վիճակը։ Վերջինիս առանձնայատկութիւնը կայանում է գլխաւորապէս գիտակցական կամքի թուլանալու մէջ, որն ընդհանրապէս դեկավարում և պահում է հոգեկան պրոցէսների ընթացքը։ Մտապատկերների յաջորդական ընթացքը կառավարում է միայն շատ անորոշ զգացմունք, ուստի և այս ընթացքը շատ անկանոն է։ Այսպիսով առանձին գրգիռները, արտաքին աշխարհի զգայական տպաւորութիւնները կամ մեր սեփական մարմնի վիճակներն իսկոյն ևեթ առաջ են բերում մտապատկերներ, որոնց հետ զգօն կերպով կապուած են այդ զգացմունքները։ Այսպէս օրինակ՝ ծանր շնչառութիւնը թուում է որպէս մղձաւանջ, թեթևը՝ թռիչք, ոտքը ծակելը՝ օձի խայթոց, լսուած հրացանաձգութիւնը՝ ոսանութեան պատմութիւն։

Եթէ մենք հետազօտենք այն մտապատկերները, որոնք ծագում են սրթուն գիտակցութեան մէջ ոչ արտաքին գրգռի անմիջական ազդեցութեան տակ, ապա կերևայ, որ մէկ մտապատկերը միշտ ծագում է մի ուրիշից, որի հետ նա որևէ կապ ունի։ Մտապատկերների այս կապը կոչում են մտապատկերների զու-

գորդութիւն կամ գաղափարի զուգորդութիւն։ Սա արտայայտւում է գլխաւորապէս երկու ձևով և հիմնւում է՝ 1). Մտապատկերների նմանութեան վրայ.—մարդու կամ դաշտանկարի մտապատկերն առաջ է բերում նման մարդու կամ դաշտանկարի մտապատկեր։ 2). Մտապատկերների արտաքին կապի վրայ տարածութեան և ժամանակի մէջ (շփման զուգորդութիւն).—այն, ինչ որ մենք յաճախ միասին ենք ըմբռնել, ձգտում է նաև մտապատկերների մէջ միանալ. ծանօթ անձի մտապատկերն առաջ է բերում նրա սենեակի մտապատկերը։ Շնորհիւ միմեանց հետ կապակցուած մտապատկերների այս զուգորդման, ընդհանրապէս, ստանում ենք առանձին առարկայի մտապատկեր։ Խնձորի մտապատկեր ես ունենում եմ շնորհիւ միայն այն բանի, որ յաճախ միաժամանակ ստացել եմ խնձորի տեսքի, համի և գոյնի զգայութիւնները, և որ այս մտապատկերներից մէկը օրինակ տեսքինը, իսկոյն յառաջացնում է խնձորին պատկանող միւս մտապատկերներն էլ։ Ժամանակի վերաբերեալ զուգորդութիւնը, որ արտայայտւում է միաժամանակութեամբ կամ ժամանակագրական յաջորդականութեամբ, տեղի է ունենում, օրինակ, այն դէպքում, երբ տարուայ որոշ օրուայ հետ կապուած է տօնախմբութեան մտապատկերը, կամ անգիր սովորած ոտանաւորի սկզբի բառը յիշեցնում է մնացած բառերը, կամ թէ որևէ ծանօթ եղանակի սկիզբը առաջացնում է յաջորդ ձայների մտապատկերը։ Որքան աւելի յաճախ են ծառայում այս զուգորդութիւնները մտապատկերների վերարտադրման համար, այնքան աւելի հեշտ է կատարւում այդ զուգորդութիւնը։ Վարժութիւնն այստեղ մեծ դեր է խաղում։

Ինչ վերաբերում է մտապատկերների անհետանալու հարցին, այդ առթիւ ոմանք ենթադրում են, որ դա լիովին բնական է և չի պահանջում յատուկ բացատրութիւններ. իսկ միւսներն, ընդհակառակը, կարծում են, որ տևականութեան օրէնքի հիման վրայ, մտապատկերները պէտք է պահպանուէին, և որ նոցա անհետանալը կարիք ունի յատուկ բացատրութեան։ Եթէ տևականութեան օրէնքը հասկանանք այն ընդարձակ իմաստով, թէ առանց համապատասխան պատճառի ոչ մի վիճակ չի կարող փոխուել, ապա այստեղից հետևում է, որ մտապատկերի անհետանալը, որն անվիճելի կերպով գոյութիւն ունի, պէտք է բացատրուի։ Այս բացատրութիւնը պէտք է բղխի այն դրութիւնից, որ, այսպէս կոչուած, գիտակցութեան եղութեան պատճառով վերջինիս մէջ միաժամանակ կարող է լինել միայն մտապատկերների մի սահմանափակ թիւ, ուստի և մի քանի մտապատկերներ դուրս են մղում միւսներին։ Թէ ինչի վրայ է հիմնում մի քանի մտապատկերների միւսներին ճնշելու և նոցա ոյժը թուլացնելու ընդունակութիւնը, դա հետևում է մասամբ այդ մտապատկերների

վերարտադրման օրէնքներից, մասամբ էլ պատկերացնող սուբյեկտի համար ունեցած նշանակութիւնից։ Որքան աւելի սովորական է դարձած մի մտապատկերի կապակցութիւնը միւսների հետ, այնքան աւելի շատ առաւելութիւն կստանայ նա մրցակից մտապատկերների նկատմամբ։ Այսպէս օրինակ, h-ը այբուբենական e f g h շարքի մէջ առաւելութիւն ունի երաժշտական e f g a գամմայի a-ից։ Միւս կողմից մտապատկերը գիտակցութեան մէջ կմնայ այնքան աւելի ոյժով, որքան աւելի կարևոր է նրա ցոյց տուած առարկան մեզ համար, և հետևաբար որքան աւելի մեծ է զգացմունքի վրայ հիմնուած հետաքրքրութիւնը, որ մենք ունենք դէպի այդ առարկան։

Ուշադրութիւն եւ յիշողութիւն.

Մտապատկերների պահպանման և վերարտադրման հետ կապուած են երկու կարողութիւններ, որոնք հոգեկան կեանքում մեծ դեր են խաղում. սոքա են՝ ուշադրութիւնը, այսինքն մի կարողութիւն, որն ըստ կարելոյն աւելի պարզ և յստակ ձևով պահպանում է մտապատկերներն ու մտապատկերների շարքերը, և յիշողութիւնը, այսինքն՝ մի կարողութիւն, որն անհետացած մտապատկերները գիտակցօրէն վերարտադրում է կամ նոցա յիշում։

Սովորաբար տարբերութիւն են դնում անկամ և կամաւոր ուշադրութեանց միջև։ Անկամ ուշադրութիւնն առաջանում է որ և է յանկարծակի գրգռի միջոցով, որն ստիպում է մեզ դէպի ինքը դառնալ, որպէսզի ըստ կարելոյն աւելի պարզ ըմբռնենք այն։ Այսպէս օրինակի համար՝ մի սաստիկ լոյս կամ յանկարծակի աղմուկ իրենց վրայ են դարձնում մեր անկամ ուշադրունը։ Կամաւոր ուշադրութիւնն առաջանում է հետաքրքրութեան շնորհիւ, որը գրգռում է կամքի գործողութիւնը՝ ուղղելու հոգեկան ոյժը որոշ մտապատկերների կամ մտապատկերների շարքերի վրայ։ Որովհետև ուշադրութեան հետևանքն է որոշ մտապատկերների պահպանումը, ճնշելով միւսները, ուստի նա կախուած է վերջիններիս ոյժից և կարող է յառաջանալ մասամբ հետաքրքրութեան դրդումով, մասամբ էլ մտապատկերների մէջ եղած կապի խիստ պահպանումով։ Երբ վերջինս չի լինում, ապա տեղի է ունենում հակառակ դրութիւնը, այսինքն ցրուածութիւն։

Յիշողութիւնը հիմնուում է վերարտադրման (Reproduktion) օրէնքների վրայ։ Մենք կարող ենք վերարտադրել մի մտապատկեր, մտաբերել այն, հետևելով այն մտապատկերների շարքին, որի մէջ գտնուում է նա, և այսպիսով զուգորդման օգնութեամբ հանդիպել նրան։ Այս պատճառով որչափ աւելի բազմակողմանի և աւելի որոշ լինի մի մտապատկերի կապը միւսների

հետ, այնքան աւելի հեշտութեամբ կարող ենք մտաբերել նրան։ Հետևապէս մենք որ և է մտապատկեր տպաւորում ենք մեր յիշողութեան մէջ, կապակցելով նրան ուրիշ մտապատկերների հետ։ Այս կապակցութիւնը տեղի է ունենում կամ մեքենայական եղանակով՝ վարժողութեամբ, յաճախ կրկնելով միմեանց յաջորդող մտապատկերները, որպիսի դէպքում սովորաբար կապուած ենք լինում մտապատկերների այն շղթայի հետ, ուր իւրացրած ենք եղել մտապատկերների շարքեր—ասոցիացիաներ (անդիր սովորած ոտանաւորը կամ հաճելի բառը հակառակ դասաւորութեամբ դժուարութեամբ միայն կարելի է ասել, մեր սովորած բառերը կարող ենք արագութեամբ կրկնել միայն սովորած կարգով, օրինակ՝ ֆրանսերէնից գերմաներէն.*). կամ թէ չէ տրամաբանական եղանակով, կապակցելով մտապատկերները պարզ ներքին կապով, որը հեշտութեամբ կարող ենք վերարտադրել շնորհիւ մեր մտածողութեան օրէնքների հետ ունեցած նրա համապատասխանութեան. ինչպէս օրինակ, եւկլիդէսեան երկրաչափութեան մի կանոն։

Յիշողութեան գործունէութիւնը հեշտանում է յաճախակի վարժութեամբ և հետաքրքրութեամբ, որը հակազդում է մտապատկերների անհետանալուն։ Հետաքրքրութեան տարբերութիւնից է կախուած և այն հանգամանքը, որ տարբեր մարդիկ լաւ յիշողութեամբ կարող են օժտուած լինել տարբեր առարկաների նկատմամբ, ինչպէս օրինակ՝ բառերի, թուերի, ձայների, տեղերի կամ զիտութեան որոշ շրջանների։ Բայց սրանից զատ այստեղ ինկատի պէտք է առնել յիշողութեան ընդհանուր առանձնայատկութիւնները, որոնք յատկապէս հանդէս են գալիս որպէս որոշ տպաւորութիւնների զօրեղացած ընդունակութիւններ, ինչպէս օրինակ՝ լսուած կամ արտասանուած և կամ գրուած բառերի։ Ըստ այսմ պէտք է տարբերել լսողական (akustisch), շարժողական (motorisch) և տեսողական (visuell) յիշողութիւնները։

* Մեզ համար ռուսերէնից հայերէն. Ծ. Թ.

Մտապատկերների տեսակները եւ մտածողութիւն.

Այն մտապատկերը, որը համապատասխանում է պարզ զգայութեան, օրինակ, մի գոյնի մտապատկերը, կարելի է կոչել եզակեան մտապատկեր։ Եզական մտապատկերներից կազմուում է առարկաների, անձերի, յարաբերութիւնների, դէպքերի մտապատկեր, այսինքն մի անհատական ամբողջութեան մտապատկեր կամ անհատական մտապատկեր (Individualvorstellung)։ Այս անհատական մտապատկերն, ընդհանրապէս, է մտապատկեր որ և է իրի մասին, որը պէտք է մնայ, եթէ նոյն իսկ զրկուած

մտածենք նրան իւր բոլոր էական յատկութիւններից, այսինքն՝ եղական մտապատկերներից։ Հոգեբանութիւնն արձանագրում է այս մտապատկերի գոյութիւնը (Vorhandensein), իսկ նրա ճշտութիւնը քննում է բնազանցագիտութիւնը։

Սակայն մարդկային հոգին, որն ամենից առաջ հակւում է դէպի միութիւնը, չի բաւականանում անհատական մտապատկերների որոշ քանակով, այլ աշխատում է ընդհանրացնել նոցա՝ նոր ձևեր կազմելով։ Մշտապէս կրկնւող նման մտապատկերների շարքից հոգու մէջ մնում է անորոշ բնաւորութեամբ մի ընդհանուր պատկեր, որը պարունակում է իւր մէջ միայն ընդհանուր, բայց ոչ անհատական նշաններ. դա է հանրական մտապատկերը։ Երբ խօսքը է լինում մարդու մասին ընդհանրապէս, այդ դէպքում մեր մտքով անցնում է մի հանրական մտապատկեր, մի մօտաւոր պատկեր, որը ներկայացնում է միայն բոլոր մարդկանց յատուկ ընդհանուր յատկանիշները, առանց ցեղերի և ժողովուրդների տարբերութեան։

Բայց այս անորոշ և հեշտութեամբ չքացող հանրական մտապատկերները յիշողութեան մէջ չէին կարող պահպանուել, և յետոյ վերակազմուել, եթէ նոցանից իւրաքանչիւրը կապւած չլինէր որ և է նշանի հետ։ Այս կարիքին բաւարարութիւն է տալիս լեզուն։

Իւրաքանչիւր բառ ծառայում է որ-

պէս մի նշան հանրական մտապատկերի. միայն այն դէպքում, երբ անհատների միջև եղած տարբերութիւններն ունենում են յատուկ նշանակութիւն, ինչպէս օրինակ՝ մարդկանց նկատմամբ, այդ դէպքում անհատական մտապատկերը նոյնպէս իւր նշանակութեան համար ստանում է առանձին բառ, որ վերաբերում է միայն մի անհատի։ Այս տեսակի բառեր են յատուկ անունները, որոնք ցոյց են տալիս անհատական մտապատկերներ։ Ընդհանրապէս բառը, օրինակ՝ սեղան, ծառայում է միայն հանրական մտապատկեր ցոյց տալու համար, որին չի համապատասխանում մի որոշ առարկայ, մի որոշ սեղան. միայն ցուցական դերանուան կցումով, —«այս սեղանը», կարելի է սահմանափակել մի որոշ առարկայով։

Բառի նշանակութեան օգնութեամբ հանրական մտապատկերը կարող է ճիշտ կերպով սահմանափակւել և դառնալ դաղափարի աւելի որոշ ձև. մտապատկերների կապակցութիւնները միմեանց հետ կարող են կատարուել ամենամեծ ճշտութեամբ որպէս դատողութիւններ, որոնք արտայայտւում են նախադասութիւնների մէջ, իսկ հին մտապատկերների կապակցութիւնից նորերի յառաջանալն ընդունում է աւելի բարձր աստիճանի եզրակացութիւնների կերպարանք։ Այս ամբողջ աւելի բարձր աստիճանը կազմում է իսկական մտածողութեան շրջանը։ Հետևաբար, մտապատ-

կերների սովորական ընթացքի և իսկական մտածողության տարբերությունը կայանում է միայն նրանում, որ—այն ինչ որ այնտեղ առաջանում է անկամ կերպով, այստեղ կատարվում է լիակատար պարզությամբ և որոշ դիտավորությամբ՝ ճանաչելու ընությունը և հոգեկան աշխարհը. այսինքն՝ ստեղծել այնպիսի մտապատկերներ և մտապատկերների կապակցումներ, որոնք համապատասխան են իրականության: Սրան է վերաբերում և այն, որ հոգու գործունեությունն ուշադրության օգնությամբ ուղղվում է որոշ շրջանի վրայ և կատարվում է որոշ հիմունքներով, որոնք իրենց հերթին ենթարկվում են հետազոտման: Այսպիսով մտածողությունը կազմում է գաղափար, բաժանելով բոլոր տարասեռ և միացնելով ընդհանուր յատկանիշները. ինչպես օրինակ՝ «զուգահեռակողմ» (Parallelogramm) գաղափարը կազմում ենք զատելով (weglassen) փոփոխական յատկանիշները՝ անզուգահեռական կողմերի մեծությանց յարաբերությունը, անկիւնների մեծությունը, և կապակցելով բոլոր ընդհանուր յատկանիշները՝ քառանկիւնի ձևը, հակադիր կողմերի զուգահեռականությունը:* Դատողությունն առաջանում է գաղափարների կապակցությունից. օրինակ, ուղղանկիւն քառանկիւնին

* Աբստրակցիա անելու գաղափարն է շեշտվում այստեղ. Ծ. Թ.

մի զուգահեռակողմ է, իսկ եզրակացությունը մէկ կամ մի քանի դատողություններից հանած մակաբերությունն է: Այսպէս օրինակ, երկու դատողություններից՝ «այս քառանկիւնին մի զուգահեռակողմ է», և «զուգահեռակողմերի մէջ անկիւնագծերը փոխադարձաբար կիսում են միմեանց», մակաբերվում է, որպէս եզրակացություն, երրորդ դատողությունը՝ «այս քառանկեան մէջ անկիւնագծերը փոխադարձաբար կիսում են միմեանց»: Պայմանների աւելի ճիշտ հետազոտելը, որոնցով ստացվում են պարզորոշ գաղափարներ, ճիշտ դատողություններ և ճիշտ եզրակացություններ, կազմում է տրամաբանության խնդիրը:

Մտածողության զանազան խնդիրները, յատկապէս Կանտից սկսած, բաշխված են տարբեր կարողություններին: Դատողությանը (Verstand), որպէս «գաղափարներ կազմելու կարողության» վերագրվում է փորձի վերացական մշակումը, ի հակադրություն բանականության, (Vernuntt), որը, որպէս «իդեաներ ստեղծելու կարողություն», խնդիր ունի այն, ինչ որ դուրս է փորձի սահմաններից, այսինքն՝ «գերբնականը»:

Կապակցեալ աշխարհի ամբողջութեան մասին։

Մենք գիտեցինք մինչև այժմ, թէ ինչպէս է իմացութիւնն (das Erkenen) անցնում պարզ զգայութիւններից մտապատկերների ու մտապատկերների կապակցութեան և վերջապէս մտածողութեան։ Բայց սրանով դեռ չի սպառւում այն նիւթը, որը մենք հոգեբանական դիտողութեան միջոցով գտնում ենք մեր մտապատկերների մէջ։ Մենք այստեղ հանդիպում ենք ոչ միայն առանձնակի զգայութիւնների, մտապատկերների, գաղափարների, դատողութիւնների, եզրակացութիւնների, այլ և իրական աշխարհի կապակցեալ մտապատկերի, որի մէջ ամփոփւում են մեր առանձնակի մտապատկերները։ Այստեղից հարց է ծագում՝ որտեղից է ստացւում ամեն ինչ ընդգրկող այսպիսի մի մտապատկեր։ Այստեղ ամենից առաջ պէտք է հաշուի առնել երկու գլխաւոր ձևեր, որոնց մէջ մենք գտնում ենք մեր փորձի բոլոր տուեալները՝ տարածութիւնը և ժամանակը, իսկ յետոյ այն հիմնական ձևը, որի մէջ մենք պատկերացնում ենք այդ տուեալների ներքին կապը՝ պատճառականութիւնը։

Հոգեկան աշխարհն ըմբռնում ենք միայն ժամանակային, իսկ մարմնականը՝ թէ ժամանակային և թէ տարածական տեսակէտից։ Ընդհանրապէս ժամանակի մտապատկեր ստանում ենք միայն այն չափով, ինչ չափով նկատում

ենք, որ այն, ինչ առաջ կար, այժմ արդէն գոյութիւն չունի. հետևապէս առաջնորդւում ենք մեր գիտակցութեան ենթադրութեամբ, թէ մենք ինչ որ մի բանի փոփոխութիւնը գիտակցում ենք և նախկին վիճակները վերստին ճանաչում. որովհետև միայն այս ձևով կարող ենք նոցա միջև եղած ժամանակային տևողութիւնը պատկերացնել։ Հետևաբար, որքան աւելի կանգ առնենք մի մտքի կամ մի զգացմունքի վրայ, առանց որ և է փոփոխման ենթարկուելու, այնքան աւելի կկորչի ժամանակի մտապատկերը։ Զուտ ժամանակի մտապատկեր, անկախ այն հանգամանքից, թէ ինչ է նրա մէջ կատարւում, հնարաւոր է միայն տարածութեան պատկերացման օգնութեամբ՝ նման որոշ հատուածներով ուղիղ գծի պատկերի։

Եթէ մենք կամենայինք առանց յատուկ օժանդակիչ միջոցների, միայն մեր ներքին վիճակների փոփոխմանց օգնութեամբ գնահատել ժամանակամասերը (Zeitabschntitt), այդ դէպքում կախւած կլինէինք երկու հանգամանքից. նախ այն հետաքրքրութիւնից, որը մեզ համար կունենայինք ժամանակի տուեալ հատուածի առանձին դրութիւնները, և երկրորդ, այդ դրութիւնների քանակից։ Այն միտքը, թէ ժամանակը թևեր ունի, յատկապէս այն դէպքում է պարզ կերպով հանդէս գալիս, երբ մենք կենդանի կերպով պատկերացնում ենք մեր կեանքի որ և է վիճակը կամ պատահարը՝ այն հետաքրքրութեան հետ միասին, որը մեր տեսա-

կէտից կապված է այս վիճակի կամ պատահարի հետ. այնպէս որ միջանկեալ, աւելի պակաս կարևորութիւն ունեցող պրոցէսները յետ են մղւում։ Սրան հակառակ, ժամանակը մեզ համար դանդաղ է անցնում այն դէպքում, երբ մեր դիտած ժամանակամասերը լի են մեծ քանակութեամբ փոփոխուող դէպքերով, որոնք չեն ներկայացնում ոչ մի աչքի ընկնող մոմենտ։ Հետևապէս ժամանակի այսպիսի սուբյեկտիւ գնահատումը ոչ ճիշտ և փոփոխական կլինէր։ Ուստի մարդիկ ժամանակի համար հնարել են օբյեկտիւ չափ, օգտուելով բնութեան մէջ եղած հաւասարաչափ շարժումներից, ինչպէս՝ արեգակի, լուսնի, ճօճանակի։

Որովհետև իրական աշխարհի մասին ունեցած մեր մտապատկերների մէջ ունենք նաև տարածութեան մտապատկերը, որը սակայն տարածային բնաւորութիւն չի կրում, արդէն իսկ հարց է ծագում, թէ ինչ ձևով ենք մենք հասնում տարածութեան այդ մտապատկերին։ Դիտելով որ և է առարկայ, օրինակ՝ մի շէնք, մենք տեսնում ենք զանազան տարածային տարրեր. ստանում ենք մեզնից ունեցած նրա հեռաւորութեան մտապատկերը, և բացի դրանից կազմում ենք մի պատկեր նրա երկարութեան, լայնութեան և բարձրութեան, այսինքն՝ նրա երեք չափումների (Dimension) մասին։

Որպէսզի չափենք հեռաւորութիւնը, մենք երևակայում ենք մի ուղիղ գիծ սկսած այդ շինութիւնից մինչև մեր կանգնած տեղը։ Բայց

նոյն այդ հեռաւորութիւնից մենք չենք ստանում ոչ մի որոշ անմիջական զգայութիւն։ Այդ զգայութիւնն աւելի շուտ երևան է գալիս որպէս առարկայի իսկական և երևացող մեծութեանց համեմատութեան հետևանք. յաճախակի վարժութեան պատճառով այս համեմատութիւնն այնպէս արագ է կատարւում, որ մեզ թւում է որպէս անմիջական ըմբռնում։ Դիտելի առարկան որքան աւելի փոքր է երևում մեզ իւր իսկական մեծութեան համեմատութեամբ, այնքան աւելի ենք համարում մեզնից ունեցած նրա հեռաւորութիւնը. իսկ որքան աւելի է նա մօտենում իւր իսկական մեծութեանը, այնքան չնչին է երևում մեզ այդ հեռաւորութիւնը։ Իսկական մեծութեան աւելի ճիշտ գնահատութիւնն աշխատում են որոշել շարքով կանգնած մարդկանց օրինակի օգնութեամբ, որոնց մօտաւոր մեծութիւնը քիչ թէ շատ յայտնի է լինում. կամ թէ, երբ իսկական մեծութիւնն անորոշ է և որոշել էլ չի կարելի, այդ դէպքում նրա հեռաւորութեանը համապատասխանող ուղիղ գիծը բաժանւում է մի քանի մասերի, որոնց երկարութիւնը կարող է որոշուել այդ հեռաւորութեան մէջ եղած առարկաների օգնութեամբ։ Ընդհանրապէս, երբ այս երեք տարրերից,—իսկական մեծութիւնը, երևացող մեծութիւնը և հեռաւորութիւնը,—երկուսը տրուած են, ապա երրորդը միշտ կարելի է որոշել։ Բացի այդ, հեռաւորութիւնը որոշելու համար նշանակութիւն ունի նաև դիտելի առարկայի

շրջագծերի պարզորոշ լինելը, որը կախված է այդ առարկան մեզնից բաժանող օդի շերտի հաստութիւնից։

Հեռաւորութիւնն աւելի ճիշտ որոշելու համար, առանց այդ հեռաւորութիւնն արտայայտող ուղիղ գիծը չափելու, ծառայում է պարալլակսը, այսինքն անկեան այն թեքումը, որ ստացւում է առարկան երկու տարբեր կողմերից դիտելիս։ Որքան աւելի է հեռացած առարկան, այնքան փոքր է թւում այդ թեքումը։ Այսպէս օրինակ՝ վագոնով գնալիս մեզ թւում է, թէ մօտ առարկաներն անցում են աւելի արագ, քան հեռուում եղածները։ Պարալլակսի օգնութեամբ հեռաւորութիւնն աւելի ճիշտ չափելու համար՝ չափւում է դիտող առարկայից դէպի դիտողութեան երկու կէտերն անցկացրած ուղիղ գծերից ստացած անկիւնը։ Պարալլակսների օգնութեամբ չափելը մեծ մասամբ գործադրւում է յատկապէս աստղաբաշխութեան մէջ։

Բայց մենք ինչպէս ենք հասնում մարմնի երեք չափումների պատկերացմանը։ Ամենից առաջ ինչ որ տեսնում ենք՝ դա միայն մի մակերևոյթ է զանազան փոփոխութիւններով (Schattirung)։ Իրականութիւնն առաջին անգամ ներկայանում է մեզ որպէս մի պատկեր, որի մէջ երեք չափումներն էլ արտայայտած են երկուսով. այս պատճառով ի ծնէ կոյրին, երբ սա օպերացիայի շնորհիւ սկսում է տեսնել, խորանարդը երևում է որպէս քառակուսի, գունդը՝ որպէս

շրջան, իսկ բուրգը՝ եռանկիւնի։ Խորութեան մասին պատկեր մենք ստանում ենք տեսողական զգայութիւնները միացնելով շօշափողական և շարժողական զգայութեանց հետ։ Պտտելով մարմնի շուրջը, մենք համոզւում ենք, որ որոշ կողմից ստացած հարթութեան ըմբռնումը դեռ չի տալիս մարմնի ընդհանուր պատկերը. այլ որ առաջուց տեսած հարթութիւններին միանում են ուրիշներն էլ. իսկ շօշափողութեան զգայութիւնը, որն արտայայտում է մարմինների ցոյց տուած զանազան ձևի դիմադրութիւնը և այսպիսով հնարաւոր դարձնում նոցա տարբերութիւնների աւելի ճիշտ հետազօտութիւնը, ամբողջացնում է այս պատկերը և տալիս նրա ձևի ու սահմանների ընդհանուր մտապատկեր։

Սակայն այս դեռ չի բացադրում, թէ ընդհանրապէս ինչպէս է, որ անտարածի հոգին կարող է ըմբռնել տարածական պատկերներ, և որ նա ունի մի որոշ տարածութիւն բռնող տան մտապատկեր, մինչդեռ ինքը՝ այդ մտապատկերը տարածական չէ։ Սրա վրայ է հիմնւում Լոցցէի (մահ. 1881 թ.) «լոկալ նշանների» (Lokalzeichen) տեսութիւնը։ Համաձայն այս տեսութեան, արտաքին ամեն մի գրգիռ, նայած աչքի ցանցաթաղանթի կամ մորթու մակերևոյթի այն տեղին, ուր հանդիպում է նա, առաջացնում է նաև յատուկ, որակապէս տարբեր, կողմնակի զգայութիւն. ահա հէնց այս վերջինս էլ ծառայում է հոգու համար որպէս տա-

բածութեան զգայութիւն։ Այսպիսով միևնոյն գոյնի գրգիռը R կտեղափոխուի տարածութեան տարբեր տեղեր՝ a, b կամ c, նայած իւր ունեցած տարբեր Lokalzeichen-ների, այսինքն հոգու մէջ կարող է երևան գալ որպէս Ra, Rb, Rc։ Յամենայն դէպս անհրաժեշտ է հոգուն վերագրել մի կարողութիւն, որով նա այդ նշաններին տալիս է տարածային նշանակութիւն և ընդարձակում է նոցա որպէս տարածութեան ընդհանուր մտապատկեր (Gemeinvorstellung)։

Այսպիսով տարածութեան և ժամանակի ձևերն օգնում են մեզ մի կապակցեալ պատկեր կազմելու իրական աշխարհի մասին։ Սակայն այս միութիւնը իւր լրիւ կատարելութեան է հասնում միայն շնորհիւ այն բանի, որ մենք երևոյթները հասկանում ենք ըստ նոցա ներքին կապակցութեան, որպէս պատճառի և հետևանքի մի սիստեմ։ Մենք ընդունում ենք, որ ամեն մի երևոյթ ունի իւր պատճառը, և որ միևնոյն պատճառը միշտ առաջ է բերում միևնոյն հետևանքը։ Բայց այս պատճառականութիւնն անմիջապէս մենք չենք ըմբռնում. մեր ըմբռնածն է միայն այն, որ b երևոյթը ամեն անգամ կանոնաւոր կերպով հանդէս է գալիս a երևոյթի երևան գալուց յետոյ։ Որ a-ն b-ի պատճառն է, այդ մենք ենք ընդունում, որին դրդում է մեզ a-ի և b-ի կանոնաւոր յաջորդականութիւնը։ Թէ որչափ ուղիղ է մեր այդ ընդունածը, հետազօտում է բնա-

զանցագիտութիւնը։ Հոգեբանութիւնը կարող է միայն արձանագրել այն իրողութիւնը, որ իմացող հոգին օժտուած է երևոյթների կապակցութիւնը պատճառականութեան օրէնքի համաձայն բացատրելու յատկութեամբ։

ԶԳԱՑՄՈՒՆՔ

Զգացմունքի էութիւնը եւ տեսակները.

Զգացմունքները հաճոյքի և տհաճութեան վիճակներն են. սրանով նոքա տարբերւում են զգայութիւններից և մտապատկերներից, որոնք ըստ ինքեան մեզ համար հաւասարարժէք են։ Զգացմունքի և զգայութեան մէջ եղած տարբերութիւնը երևում է, օրինակ, նաև նրանում, որ միևնոյն արտաքին գրգռի ժամանակ շօշափողական զգայութիւնը նախորդում է ցաւի զգացմունքին, ինչպէս օրինակ՝ տաք վառարանին դիպչելիս։

Զգացմունքն առաջանում է աւելի դանդաղ, քան այն մտապատկերը, որին նա համապատասխանում է։ Մենք աւելի շուտ կարող ենք բախտաւորութեան մտապատկերից անցնել դժբախտութեան մտապատկերներին, քան բախտաւորութեան զգացմունքից դժբախտութեան զգացմունքին։ Այսպիսով պէտք է ընդունենք, որ զգացմունքն աւելի է դիմում կենդրոնական նեարդային օրգանների գործակցութեանը, քան թէ զգայութիւնը և մտապատկերը։ Բայց իրականութեան մէջ զգայութիւնը կամ մտապատկերը մշտապէս կապուած են հաճոյքի և տհաճու-

թեան զգացմունքների հետ. նոքա ունին այսպէս կոչուած «զգացմունքի տոն» (Gefühlston). հենց սրանում էլ կայանում է այն հետաքրքրութիւնը, որ տածում ենք դէպի նոցա և այն նշանակութիւնը, որ նոցա ենք վերագրում։

Գոյութիւն ունի հաճոյքի և տհաճութեան տարբեր ձևերի անվերջ բազմութիւն։ Զգացմունքները տարբերւում են միմեանցից ոչ միայն քանակապէս, այլ և որակապէս. մենք հաճոյքի բոլորովին տարբեր որակի զգացմունքներ ենք ստանում, երբ ճաշակում ենք մի համեղ կերակուր, կամ կատարում մի լաւ գործ, և կամ դիտում մի գեղեցիկ նկար։ Այս պատճառով չի կարելի գումարել, ինչպէս Հարտմանն է կամենում, մարդկանց հաճոյքի և տհաճութեան զգացմունքների ամբողջ քանակը մի ընդհանուր գումարի մէջ և յետոյ, համեմատելով այդ երկու գումարները, գալ այն եզրակացութեան, թէ աշխարհում տհաճութեան զգացմունքի գումարն աւելի է, և ուրեմն մարդկութեան ոչնչանալն աւելի լաւ է, քան ապրելը (պեսսիմիզմ)։

Զգացմունքների առանձնայատկութիւնները չեն ենթարկւում ճշգրիտ նկարագրութեան. նոցա կարելի է միայն վերապրել (erleben)։ Սակայն կարելի է ասել, որ նման վիճակների կամ դէպքերի հետ կապած զգացմունքները միմեանց նման են լինում։ Այսպիսով մենք կարող ենք բաժանել զգացմունքներն ըստ իրենց ծագման՝ մարմնա-

կան զգացմունքների (körperliche Gefühle), որոնք իրենց ծագմամբ կախուած են մարմնական վիճակներից, և հոգեկան զգացմունքների, (geistige Gefühle), որոնք ծագում են հոգու վիճակներից։ Վերջիններիս մէջ էլ պէտք է տարբերել հոգեկան ցած կարգի զգացմունքները հոգեկան աւելի բարձր կարգի զգացմունքներից, որոնցից առաջինները վերաբերում են զանազան մարդկանց անձնական բարեկեցութեանը՝—ուրախութիւն, վիշտ, հպարտութիւն, պատուասիրութիւն, նոյնպէս և ընկերական զգացմունքները՝ սէր, ատելութիւն, ինչ չափով որ սոքա չեն պարզաբանուած բարոյական հայեացքներով. իսկ երկրորդները կապուած են ամբողջ մարդկութեան համար նշանակութիւն ունեցող բարիքների հետ՝ ինտելեկտուալ, գեղագիտական, բարոյական և կրօնական զգացմունքներ։

Մարմնական զգացմունքներ

Մարմնական զգացմունքներն անմիջապէս միանում են զգայութիւններին, որոնցից և կախուած է նոցա տեսակն ու զօրեղութիւնը։ Ամեն մի զգայութիւն ունի իւր ուրոյն զգացմունքի տոնը, որը տուեալ զգայութիւնը դարձնում է «հաճելի» կամ «անհաճոյ»։ Սակայն այս իրաւացի է միայն միջին զօրեղութեան զգայութիւնների նկատմամբ։ Եթէ չափազանց զօրեղացնենք տրուեալ զգայութիւնը, օրինակ, թոյլ տանք, որ ձայնը իւր ամենազօրեղ աստիճանին հասնի, կամ հաճելի ջերմութիւնը չափազանց սաստկանայ, և կամ թէ սպեկտրը ուղիղ դէպի արեգակը դարձնենք, ապա այդ դէպքում սկզբնական հաճելի տպաւորութեանը կմիանայ տհաճութեան զգացմունք։ Միւս կողմից ըստ ինքեան անհաճոյ տպաւորութիւնը, օրինակ, դառը կամ թթու համը, չնչին զօրեղութեամբ կարող է առաջացնել հաճելի զգայութիւն։

Եթէ համեմատենք զգայութեան առանձին շրջանները՝ մեզ կթուայ, թէ մարմնական զգացմունքն այնքան աւելի զօրեղ է, որքան իմացութեան համար աւելի պակաս նշանակութիւն ունի այն գրգիռները, որոնցից նա ծագում է։ Ամենազօրեղ մարմնական անհաճոյ զգացմունքները՝ սեփական վիշտերը, լինում են մարմնի մէջ ներքին գործողութիւնների ժամանակ, երբ այդ գործողու-

թիւններն առաջացնող գրգիռները մեզ բոլորովին անյայտ են, կամ շատ չնչին չափով են յայտնի։ Համը և հոտը թէև շատ որոշ կերպով կապուած են հաճելի և անհաճոյ զգացմունքների հետ, բայց նոքա շատ չնչին բան են տալիս ճանաչելու այն առարկաները, որոնք առաջացրել են այդ զգացմունքները։ Իսկ տեսողական և լսողական զգայութիւնները, որոնք արտաքին աշխարհը ճանաչելու համար ամենակարևորներն են, յաճախ, ըստ երևոյթին, ամենևին չեն առաջացնում յատուկ զգացմունքներ, և շատ դժուար է լինում ամեն անգամ որոշել այն զգացմունքները, որոնք կապուած են յիշեալ զգայութիւնների հետ։ Ձայներ լսելու, ևս առաւել գոյներ տեսնելու ժամանակ, այն հարցը, թէ ինչ են նոքա նշանակում, այն աստիճանի գլխաւոր տեղ է բռնում, որ «զգացմունքի տոնը» յատուկ ուշադրութեամբ հազիւ է գիտակցում։ Զգացմունքի զօրեղութեան և իմացութեան համար ունեցած նշանակութեան միջև եղած այս յարաբերութիւնը շատ կարևոր է, որովհետև շնորհիւ սրա իմացութեան համար ամենասովորական զգայական ըմբռնումներն ամենից աւելի պակաս ենթակայ են խանգարման զօրեղ զգացմունքների կողմից։

Հոգեկան զգացմունքներ.

Հոգեկան զգացմունքները նոյնպէս երևան են գալիս շնորհիւ մարմնական վիճակների և յատուկ զգայական գրգիռների. բայց սոքա սերտ կապակցութեան մէջ են գտնւում ոչ թէ այդ վիճակների և զգայական գրգիռների հետ, այլ այն մտապատկերների, որոնք իրենց միջոցով են առաջանում։ Մենք շատ որոշ կերպով տարբերում ենք մեր մարմնի վիրաւորուելուց առաջացած ֆիզիքական ցաւը՝ վիրաւորական խօսքից առաջացած հոգեկան տհաճութեան զգացմունքից։

Ինտելեկտուել զգացմունքներ առաջանում են մտապատկերների ներքին յարաբերութիւնից։ Եթէ հոգեկան կեանքի ընթացքը տանում է դէպի մեր մտապատկերների միութեան և կապակցութեան հաստատումը, այդ դէպքում առաջանում են հաճելիութեան զգացմունքներ, ինչպէս օրինակ գիւտ անելիս, որը բացադրում է մեզ որ և է երևոյթի ամբողջութեան զանազան մասերի (Erscheinungsgruppe) միջև եղած կապակցութիւնը։ Միւս կողմից մեր մտածողութեան շրջանում եղած անհերդաշնակութեան, կասկածանքի և հակասութեան հետ կապուած է տհաճութեան զգացմունք։ Էստետիկական զգացմունքներ առաջանում են մեր մէջ գեղեցիկի ըմբռնման ժամանակ։ Սոքա թերևս նրանով են բացադրւում, որ աշխարհի որ և է մասում երևան եկած ձևերի ներդաշնակութիւնը ամենա-

լիակատար կերպով բաւարարութիւն է տալիս մարդկային հոգու պահանջին՝ միացնելով և միութեան վերածելով բազմազանութիւնները։ Էստէտիկական զգացմունքի հետ կապ ունի և ճաշակը, այսինքն մի կարողութիւն, որով ըմբռնում ենք էստէտիկական տպաւորութիւններ, որոնք կապուած են այդ տպաւորութիւնները ճիշտ գնահատելու և գեղեցիկը տգեղից տարբերելու կարողութեան հետ։ Բացի այդ, էստէտիկական զգացմունքի հետ որոշ յարաբերութեան մէջ է գտնւում ֆանտազիան*, որը գեղեցիկ ձևեր ստեղծագործելու կարողութիւն է։ Ֆանտազիայից պէտք է տարբերել երևակայութիւնը (Einbildungskraft), այսինքն մի կարողութիւն, որով վերարտադրում և ազատ կապակցում ենք արդէն գոյութիւն ունեցող մտապատկերները։ Մենք երևակայութիւն վերագրում ենք նրան, ով ընդունակ է իրեն նկարագրւած, օրինակ, մի դաշտից (Landschaft), առաջուց ունեցած իւր սեփական մտապատկերների օգնութեամբ, կազմելու այդ դաշտի հայեցողական պատկերը. իսկ ֆանտազիա վերագրում ենք նրան, որի էստէտիկական զգացմունքն է սկսում գործել այդպիսի նկարագրութեան ժամանակ.

* Ծնթ. Որովհետև մեր լեզուում «ֆանտազիային» փոխարինող ուրիշ բառ չկայ, որը տարբերւի «երևակայութիւն» բառից, ուստի ֆանտազիա բառը հենց նոյնութեամբ էլ թողնում ենք։ Ս. Թ.

այնպէս որ մեր նկարագրելուց յետոյ նա կարողանում է դաշտի պատկերին գեղեցիկ ձև տալ։ Գեղարուեստական ֆանտազիան ներկայանում է ֆանտազիայի աւելի բարձր աստիճանը։ Բարոյական զգացմունքը որոշ վարմունքների մտապատկերների հետ է կապուած. նայած թէ այդ վարմունքներից հաճոյքի՞, թէ՞ տհաճութեան զգացմունք է բղխում, ըստ այնմ էլ նոքա կոչւում են լաւ կամ վատ։ Դատողութեան օգնութեամբ բարոյական զգացմունքներից կազմւում են վարմունքների հիմնական օրէնքներ ու սովորութիւններ, այսինքն բնաւորութիւններ։ Ամբողջ ճի գաղափարն ընդգրկում է ինչպէս բարոյական զգացմունքը (primäres Gewisse), այնպէս և վարմունքների բարոյական գնահատումը դատողութեան օգնութեամբ (sekundäres Gewisse)։ Կրօնական զգացմունքը կապւած է դէպի Աստուած կամ աստուածներն ունեցած մեր հաղորդակցութեանց մտապատկերի հետ։ Այս զգացմունքը իւր զարգացման բարձրագոյն աստիճանին հասնելիս միշտ միանում է բարոյական զգացմունքի հետ. այն զօրութիւնները, որոնցից մարդ իրեն կախուած է զգում՝ դառնում են նրա համար բարոյական իդեալի կրողներ։

Զգացմունքի ոյժը եւ տեւողութիւնը.

Զգացմունքը կարող է որ և է պատճառով հանդէս գալ երբեմն այնպիսի ոյժով, որ այլ ևս դատողութեանը ոչ մի դեր բաժին չընկնի։ Այս դէպքում այդ զգացմունքն ամբողջապէս տիրում է մարդուն և իրեն ենթարկում նրա կամքը. զգացմունքի այս ձևի յանկարծակի ժայթքումը կոչւում է աֆֆեկտ (affekt), օրինակ՝ բարկութիւնը։ Եթէ որ և է զօրեղ զգացմունք երկար ժամանակ է տիրում մարդուն, ապա նա դառնում է կիրք որ պատրաստ է մշտապէս իրեն ենթարկելու մարդու կամքը։ Սրանից պէտք է տարբերել Gesinnung-ը*, օրինակ՝ հայրենասիրութիւնը կամ բարեպաշտութիւնը։ Այստեղ մի որոշ զգացմունք ամեն անգամ, առանց սակայն տատանումներից զերծ լինելու, հաստատուն մտապատկերների հետ է կապւած։ Բայց սոքա տարբերւում են կրքից իրենց աւելի երկար տևականութեամբ և համաչափութեամբ, որով իրենց ազդեցութիւնը կամքի վրայ նկատելի են դարձնում։

---

* Հայերէն համապատասխան բառ. չգտնելով, թողինք գերմաներէնը նոյնութեամբ. Ծ. Թ.

Զգացմունքների ընթացքը եւ նոցա կապակցութիւնը.

Զգացմունքներն ինքնանկախ կերպով չեն կապւում միմեանց հետ. նոքա ընդհանրապէս կապակցութեան մէջ են պատկերացումների հետ, որովհետև զգացմունքների փոփոխուելու համար հարկաւոր է պատկերացումների փոփոխում։ Այստեղ չպէտք է մոռանալ, որ զգացմունքները չեն փոփոխւում այնպէս արագ, ինչպէս մտապատկերները, և այս պատճառով շատ յաճախ որ և է զգացմունք նոյնութեամբ մնում է, չնայած որ մեր մէջ արդէն անցել է նոր մտապատկերների մի ամբողջ շարք։ Նոյն իսկ որ և է զգացմունքի յիշողութիւնն անգամ յառաջանում է այդ զգացմունքի համապատասխան մտապատկերի օգնութեամբ. այսպէս օրինակ՝ եթէ ուզենք որոշ վիճակում եղած մի մարդու զգացմունքները հասկանալ և մեր մէջ էլ առաջ բերել նման զգացմունքներ, ապա այդ կարող ենք միմիայն այն ժամանակ, երբ կենդանի կերպով պատկերացնենք տուեալ վիճակը։ Բայց դիտելով զգացմունքների միմեանց յաջորդելը, մենք չենք կարող չնկատել, որ մեր զգացմունքների վրայ ևս զօրեղ ազդեցութիւն է թողնում յարաբերականութեան օրէնքը, որը մտապատկերների շրջանում նոյնպէս մեծ դեր է խաղում։ Զգացմունքը ներկայանում է մի ինչ որ բարձր աստիճանի յարաբերականութիւն (Relativ)։ Իւրաքանչիւր զգաց-

մունք կախուած է այն հանգամանքից, թէ ինչ ուրիշ զգացմունք է նախորդել նրան։ Այս պատճառով միևնոյն ըմբռնողութիւնը, միևնոյն դրութիւնը (Situation) տարբեր ժամանակներում կարող են մեր մէջ առաջ բերել բոլորովին տարբեր զգացմունքներ։ Հաճելիութեան զգացմունքն աւելի զօրեղ է, եթէ նա ցաւին է յաջորդում, քան եթէ մի անտարբեր վիճակի. նոր առողջացած դրութեան զգացմունքն աւելի զօրեղ է, քան արդէն գոյութիւն ունեցող առողջ վիճակինը։ Եթէ զգացմունքներն առաջ գան չափազանց մեծ չափերով, ապա նոքա կարող են հեշտութեամբ իրենց հակադիր որակին փոխուել։ Մեր նեարդային համակարգութիւնը տալիս է մեզ հաճոյքի կամ ցաւի զգացմունք, միայն սահմանափակ չափով։ Եթէ զգացմունքը կրկնւում է, ապա նա ընդհանրապէս բթանում է։ Միևնոյն համեղ կերակրի յաճախակի գործածութիւնը կարող է նոյն իսկ զզուանք առաջ բերել։ Ցաճախ կրկնւող ցաւը չի ազդում ընդհանրապէս նախկին զօրեղութեամբ, մենք նրան վարժւում ենք։ Բայց սա ճիշտ է միայն այնպիսի զգացմունքների համար, որոնք զուտ կրաւորական վիճակներ են և ոչ թէ հոգեկան բովանդակութիւններ։ Ընդհակառակը, բոլորովին այլ պայմանների մէջ են աւելի վսեմ, ներգործական զգացմունքները։ Այստեղ կրկնութիւնը տանում է դէպի զգացմունքների զօրեղացումը։ Եթէ մենք մի քանի անգամ լսում ենք որ և է կլասիկ երաժշտական

պյեսա, ապա նրա ամեն մի կրկնութիւնը մեզ աւելի ու աւելի հաճոյք է պատճառում, որովհետև ամեն անգամ մեր երևակայութիւնն աւելի ու աւելի հեշտ է աշխատում և զգալի կերպով խորն է թափանցում տուեալ պյեսայի բովանդակութեան մէջ։

Մի քանի ժամանակակից և նման զգացմունքներ ձուլւում, դառնում են մի ընդհանրացած զգացմունք (Totalgefühl), որի նկատմամբ առաջինները մասնական զգացմունքներ են (Partialgefühl)։ Բոլոր հոգեկան բարձր զգացմունքների ժամանակ առաջանում են այսպիսի ձուլումներ։ Այսպէս որինակ՝ մեր մէջ որ և է պատմական նկարի ազդեցութեամբ առաջ եկած գեղագիտական զգացմունքը բարդւում է մի քանի մասնական զգացմունքներից, որոնք առաջանում են գոյների ներդաշնակութիւնից, պատկերի վրայ արտայայտուած դէմքերի համակրելիութիւնից, պատմական դէպքի նշանակութեան մտապատկերից, և այլն։

Մի քանի հակադիր զգացմունքների կապակցուելու ժամանակ, որոնք այս դէպքում պահում են որոշ ինքնուրոյնութիւն, առաջ են գալիս «խառը զգացմունքներ»։ Այսպէս օրինակ՝ թախիծի (Wehmut) զգացմունք առաջանում է կորցրած մարդի կամ առարկայի պատճառած վշտի և նոցա մասին եղած ուրախ յիշողութեան զգացմունքների միախառնուելուց։

Կեանքի զգացմունք եւ տրամադրութիւն.

Զգացմունքների միախառնուելու բոլորովին առանձին տեսակն է կազմում այսպէս կոչուած «կեանքի» կամ «ընդհանուր զգացմունքը» («Lebens» oder Gemein Gefühl»)։ Մեր կեանքի ամեն մի վայրկեանում մեր օրգանիզմի ընդհանուր վիճակը իւր արտայայտութիւնն է գտնում որ և է ընդհանուր զգացմունքի մէջ, որն առաջանում է, այսպէս կոչուած, ընդհանուր զգայութիւնների (Gemeinempfindung) (օրինակ՝ քաղցի և ծարաւի) հետ կապուած առանձնակի զգացմունքներից. այս զգացմունքը տարբերւում է առանձնակի զգացմունքներից նրանով, որ նա չի վերաբերում մեր մարմնի որ և է յատուկ տեղին։ Այն՝ ինչ որ ներմուծում են մեր կեանքի զգացմունքի մէջ մեր օրգանիզի առանձին վիճակները, զանազան բաղադրիչ մասերից է կազմւում։ Այսպիսի բաղադրիչ մասերին են պատկանում.

1. Բազմաթիւ այնպիսի զգացմունքներ, օրինակ՝ շօշափողական զգայութեանց (Sinnesempfindung), որոնք չափազանց չնչին են, որպէսզի կարողանային թափանցել մեր գիտակցութեան մէջ որպէս առանձին զգացմունքներ։

2. Այն զգացմունքները, որոնք կապուած են մեր մարմնի զանազան մասերի վիճակների հետ, բայց և միաժամանակ ազդեցութիւն են գործում մեր ընդհանուր վիճակի վրայ, ինչպէս օրինակ՝ առաջնացաւը։

3. Այնպիսի վիճակներից առաջացած զգացմունքներ, որպիսի վիճակները մարմնի մէջ իրենց համատարած լինելու և կեանքի ընթացքի համար ընդհանուր նշանակութիւն ունենալու պատճառով, ընդհանրապէս, չեն կարող վերագրուել օրգանիզմի որ և է տեղին։ Այս վիճակները, ինչպէս օրինակ՝ արեան յատկութիւնը, արեան շրջանառութեան արագութիւնը, դժուար կամ ազատ շնչառութիւնը, մարսողական գործողութիւնների բնական կամ անբնական ընթացքը, հանդէս են գալիս որպէս կարևորագոյն ֆակտորներ, որոնք ազդում են մեր ընդհանուր զգացմունքների վրայ։ Կեանքի զգացմունքը կազմում է մեր «տրամադրութեան» բաղադրիչ մասը, որը մի տեսակ միջին թուաբանականն է մեր զգացմունքների տուեալ վիճակների։ Մեր տրամադրութիւնը կարող է հաճելի դառնալ թէ լաւ օդի պատճառով շնչառութեան դիւրանալուց, որով կառաջանայ կեանքի զգացմունքի բարձրացումն, և թէ գեղարուեստի որ և է գեղեցիկ արտադրութեան առաջ բերած բաւականութիւնից։

Կեանքի զգացմունքը և տրամադրութիւնն աւելի քիչ են ենթարկւում նկարագրութեան, քան առանձնակի զգացմունքները։ Մենք այդ զգացմունքների համար մեր լեզուի մշակած մի քանի ընդհանուր արտայայտութիւններ միայն ունինք. օրինակ՝ գրգռուած, սառը և բարձրացած տրամադրութիւններ։ Մեր տրամադրութիւնները և ընդհանուր զգացմունքները

մշտապէս երերում են որոշ սահմանների միջև, որոնց ծայրերն են մի կողմից ոյժի, ազատութեան, յոյսի զգացմունքները, իսկ միւս կողմից՝ թուլութեան, խոնջութեան և վախի զգացմունքները։

Յատուկ նշանակութիւն ունին «կեանքի զգացմունքի» և տրամադրութեան փոփոխող երանգաւորումները յիշողութեան համար, այսինքն այն մտապատկերների պահպանման համար, որոնք յատկապէս ուժեղ կերպով ներգործել են այդ զգացմունքի և տրամադրութեան փոփոխման վրայ։ Մենք յատուկ պարզութեամբ յիշում ենք մեր նախկին որ և է վիճակը, եթէ նրա հետ կապուած է եղել մեր տրամադրութեան որ և է երանգաւորումը, և յատկապէս այն ժամանակ, երբ այդ տրամադրութիւնը նորից վերզգում ենք։ Եթէ այս վերջինը մեզ չի յաջողւում, այդ նշանակում է որ նախկին վիճակի հետ կապուած մտապատկերները յիշողութիւնից անհետացել են. օրինակ՝ մի ծանր հիւանդութիւնից ստացած վիճակը, որն առաջ է գալիս կեանքի զգացմունքի հիւանդագին փոփոխութիւնից։ Ընդհակառակը մենք շատ հակուած ենք տարբեր վիճակները նոյնացնելու, եթէ նոքա առաջ են բերում մեր մէջ միևնոյն տրամադրութիւնը։ Այս պատճառով առաջին անգամ որ և է հոգեկան վիճակ ապրելիս, մեզ շատ յաճախ թւում է, թէ առաջ էլ այդ վիճակն ապրել ենք։

Խառնուածքներ

Խառնուածքները բնածին տրամադրութեան ձևեր են, որ որոշում են մեր հոգեկան կեանքի հիմնական տոնը, մեր զգայունութիւնը որոշ զգացմունքների նկատմամբ և մեր կամքի ուրոյն յատկութիւնը։ Այս բոլորի ազդեցութեան տակ անհատի համար կազմւում է արտաքին աշխարհի տպաւորութիւններն ըմբռնելու, վերամշակելու և արտաքին աշխարհի վրայ ազդելու որոշ եղանակ, որոշ ձև։ Իւրաքանչիւր առանձին անհատի կեանքի զգացմունքը և տրամադրութիւնը փոփոխւում են որոշ սահմաններում, որոնք կախումն ունին նոյն անհատի մարմնական և հոգեկան կազմից։ Խառնուածքներ լինում են այնքան, որքան անհատներ կան։ Բայց ի հնուց անտի արդէն Գալենուսը իրաւամբ դրել է խառնուածքի չորս գլխաւոր ձևեր, որոնց միջև կարող են նուրբ տարբերութիւններ մնալ։ Այդ չորս խառնուածքներն են՝ կրակոտ (sanguinisch), ցասկոտ (cholerisch), սառնարիւն (pflegmatisch), և մելամաղձոտ (melancholisch)։ Կանոը գերմանացնելով այս արտայայտութիւնները, տարբերեց՝ զգացմունքի խառնուածքներ—թեթևարիւն (leichtblütig)=(sanguiniseh) ու ծանրարիւն (schwerblütig)=(melancholisch), և գործունէութեան խառնուածքներ—տաքարիւն (warmblütig)=(cholerisch) ու սառնարիւն kaltblütig —(pflegmatisch)։

Խառնուածքները միշտ յարաբերութիւն ունին հոգեկան գործողութիւնների շարժողութեանց հետ, քանի որ նոքա կախուած են զգացմունքային կեանքից (Gefühlsleben)։ Ընդհանրապէս մենք կրակոտ խառնուածքին վերագրում ենք կենդանի զգայունակութիւն ամեն բանի նկատմամբ, բայց առանց ստացած տպաւորութիւնների հաստատուն վերամշակման և արտաքին աշխարհի վրայ զօրեղ ներգործութեան. ուստի կրակոտի համար բնորոշ է տրամադրութեան և գործունէութեան պակաս հաստատունութիւնը։ Սառնարիւն խառնուածքը աչքի է ընկնում արտաքին գրգիռների նկատմամբ ունեցած պակաս զգայունակութեամբ, բայց երկար պահպանմամբ. այդ պատճառով նա հակուած է դանդաղկոտութեան. և սառնարիւն մարդու հոգեկան կեանքը կարող է ենթարկուել բացարձակ անշարժութեան։ Ցասկոտ խառնուածքի համար բնորոշ է որոշ ուղղութեամբ սաստիկ դիւրագրգռութիւն և ուժեղ ներգործութիւն արտաքին աշխարհի վրայ. ուստի ցասկոտը շատ յաճախ չափազանց հետևողական է լինում։ Մելամաղձոտ խառնուածքը աչքի է ընկնում զօրեղ զգայունակութեամբ, յատկապէս բարձր զգացմունքների վերաբերմամբ։ Բայց մելամաղձոտ խառնուածք ունեցողը շատ հեշտութեամբ կանգ է առնում այս զգացմունքային կեանքի վրայ, չարտայայտելով ներգործական ոյժ, տուեալ զգացմունքների հետ կապուած նպատակներին հասնելու համար։

Վունդը այս չորս խառնուածքները արտածում է երկու հակադրութիւններից՝ զօրեղութեան և թուլութեան, արագութեան և դանդաղութեան։ Ըստ այսմ էլ նա կազմում է խառնուածքների հետևեալ աղիւսակը՝

	Զօրեղ	Թոյլ
Արագ . . .	ցասկոտ	կրակոտ*
Դանդաղ . .	մելամաղձոտ . . .	սառնարիւն

Կեանքում հազիւ կպատահի, որ այս խառնուածքները զատ զատ արտայայտուած երևան գան։ Եւ ամեն մի նորմալ մարդ պէտք է ձգտի ոչնչացնել այդպիսի միակողմանիութիւններ։

Կարելի էր խօսել նաև տարբեր ցեղերի, ժողովուրդների, ընտանիքների և սեռերի խառնուածքների մասին։ Վերև յիշուած աղիւսակի մէջ, ընդհակառակը, պարզ կերպով չի արտայայտուած մի հակադրութիւն, որը ցոյց է տալիս կեանքի զգացմունքի բնածին յատկութեան մի ձևը՝ յոռետես և լաւատես աշխարհահայեացքների միջև եղած հակադրութիւնը. այսինքն՝ դէպի հաճելիութեան և տհաճութեան զգացմունքները եղած հակումների հակադրութիւնը։

---

* Կրակոտ խառնուածքը թոյլ է այն նմանատով, որ չունի նրա մէջ բարձր աստիճանի զօրեղութիւն, հաստատունութիւն և հետևողականութիւն։

Ծ. Թ.

Ինքնազգացում եւ կարեկցութիւն.

Զգացմունքը յատուկ նշանակութիւն ունի մեր ինքնագիտակցութեան համար։ Մեր ճանաչողութեան զարգացման հետ միասին կազմում ենք հենց մեր մասին մի պատկերացում, որի մէջ սկզբից և եթ հիմնաքարն (Vordergrund) է կազմում մեր մարմինը, իսկ յետոյ նրա հետ կապւում է նաև մեր հոգեկան կողմի պատկերացումը։ «Ես»-ի մասին ունեցած մեր հասկացողութիւնը կայանում է այս ընդհանուր պատկերացման բոլոր փոփոխւող վիճակների մնայուն միութեան մէջ. բայց միաժամանակ սրանով ասում ենք նաև, որ այս ներքին գործողութիւնները և մարմնի շարժումները, որոնք այդ ընդհանուր պատկերացումից են կախուած, ճանաչւում են որպէս մեր սեփականը։ Մեր «ես»-ը ուրիշներից տարբերելու համար ամենագլխաւոր հիմքը «ինքնազգացումն» է։ Պատկերացումների ամբողջ աշխարհը, որոնք ըմբռնւում և կապակցւում են մեր «ես»-ի մէջ, կարելի է պատկերացնել որպէս մեզ համար մի օտար բան, եթէ մենք ամենաանմիջական կերպով չվերապրենք հաճելիութեան և տհաճութեան այն զգացմունքները, որոնք կապուած են այդ աշխարհի հետ, և եթէ այդ զգացմունքները չներկայանան մեզ համար որպէս մեր «ես»-ի վիճակներ՝ ի տարբերութիւն ուրիշ «ես»-երի։ Մեր գիտակցութիւնից ոչ մի կախումն չունեցող այս

ինքնազգացման հիման վրայ աստիճանաբար զարգանում է այն, ինչ որ մենք կոչում ենք ինքնագիտակցութիւն. երբ մեր «ես»-ը սովորում է մտաւոր կերպով իրեն տարբերել իւր վիճակներից։ Կարեկցութեան ժամանակ մեր «ես»-ը այն աստիճան է ընդլայնւում, որ սերտ կերպով մասնակցում է ուրիշների ապրած զգացմունքներին։

Զգացմունքների նշանակութիւնը.

Կարելի է հարց տալ, թէ ինչ նշանակութիւն ունին զգացմունքները ընդհանրապէս մարդու կեանքի համար։ Իբրև պատասխան այս հարցին, կարելի է ասել, որ հաճելիութեան զգացմունքը, ընդհանրապէս, օժանդակում է մարդու հոգեկան և մարմնական կեանքի զարգացմանը. իսկ տհաճութեան զգացմունքը, ընդհակառակը, արգելք է հանդիսանում։ Ցաւի ոյժը, ընդհանրապէս, աճում է՝ նայած քայքայման այն չափին, որն առաջանում է մեր օրգանիզմի մէջ։ Մեր ճաշակը ցոյց է տալիս, թէ մարմինը իբրև սնունդ որպիսի նիւթեր է ընդունում՝ օգտակար, թէ վնասակար։ Ճիշտ է, կան այնպիսի թոյներ, որոնք շատ հաճելի են ճաշակի համար. և այդ թոյները ևս սկզբում բարձրացնում են օրգանիզմի կենսագործունէութիւնը (Lebensfunktion), որոշ ազդեցութիւն թողնելով մեր ճաշակելիքի նեար-

դերի վրայ, բայց նոցա սպանիչ յատկութիւնները երևան են գալիս մարմնի մէջ իրենց յետագայ տարածման ժամանակ։ Նոյնը կարելի է ասել նաև հոգեկան զգացմունքների մասին։ Նոյն իսկ այն հոգեկան բաւականութիւնը, որը հիմնովին ՁԼասակար է մարդու համար, դարձեալ վերջինիս որ և է մասի վրայ լաւ ազդեցութիւն է գործում։ Այն հարցը, թէ ո՞ր աստիճանի անցողակի լաւ ներգործութիւն է անում յետագայում ՁԼասակար ազդեցութիւնը, ոչ թէ զգացմունքի, այլ մտածողութեան գործն է, ինչպէս և կենսախելացիութեան (Lebensklugheit) ամենաէական խնդիրը։

Վերև ասուածներից պարզ կերպով հետևում է զգացմունքի ունեցած կարևոր նշանակութիւնը մեր կեանքի նկատմամբ։ Այս հարցի աւելի մանրամասն հետազօտութեամբ կարող է զբաղուել բնագանցագիտութիւնը, որովհետև ընդհանուր կապակցութեան մէջ պիտի դրուի զգացմունքը աշխարհի հետ։ Զգացմունքի վրայ է հիմնուած կեանքի ամբողջ պահպանումը և զարգացումը։ Այն տեսական իմացութիւնը, թէ ինչն է օգտակար և ինչը ՁԼասակար մեզ համար, անկարող է պաշտպանել մարդուն կեանքի վատ պատահարներից։ Որքան էլ որ մեր միտքը զարգացած լինէր, այնուամենայնիւ մարդս չէր ձգտի բարձր հոգեկան բարիքների հասնելու, եթէ նոցա հետ կապուած չլինէր բարձր տեսակի բաւականութիւն։ Շատ դէպքերում, միտքն ընդհանրապէս,

շատ չնչին դեր է խաղում։ Այսպէս օրինակ, մարդ վատ հոտ ունեցող կերակուր չի գործածում ոչ թէ նրա համար, որ նրա ՁԼասակար լինելու մասին է մտածում, այլ որ այդ առթիւ ունեցած մտածողութիւնը սաստիկ տհաճութեան զգացմունք է առաջ բերում։ Եթէ նախ քան սպանութիւն կատարելը ոճրագործի խիղճն իրեն տանջում է, ապա այդ առաջանում է ոչ թէ նրանից, որ նա խելամուտ է լինում սպանութեան ՁԼասակարութեանը հասարակութեան գոյութեան տեսակէտից, այլ որ նա անմիջական կերպով զգում է խղճի խայթոց, որը հանդէս է գալիս որպէս զօրեղ տհաճութեան զգացմունք։

Այսպիսով հաճելիութեան զգացմունքը, որ մարդ փնտռում է, և տհաճութեան զգացմունքը, որից նա աշխատում է խուսափել, զօրեղ ազդեցութիւն են թողնում ինչպէս առանձին մարդու, այնպէս և ամբողջ մարդկային ցեղի պահպանման և զարգացման վրայ։ Կրօնի տեսակէտից զգացմունքը նախախնամութեան ձեռքում հանդէս է գալիս որպէս գլխաւոր միջոց մարդկութեան զարգացման համար. զգացմունքները պէտք է ստեղծեն պատմութեան համար դրդապատճառների (Motiv) ամբողջ աշխարհ, և բարձր տեսակի զգացմունքները պէտք է մարդկութեանն առաջնորդեն դէպի այդ իդեալների իրականացումը։

—:::—

Կ Ա Մ Ք

Անկամ շարժումներ.

Զգացողութեան նման կամեցողութիւնն էլ հոգեկան կեանքի պարզ և սկզբնական մի գործողութիւն (Akt) է, որը թէև չի ենթարկուում ճիշտ որոշման, բայց կարող է իւր արտայայտութիւնների մէջ աւելի մօտիկից հետազօտուել։ Իսկական կամքի գործողութիւնը (Willensakt) միշտ կամ արտաքին կամ թէ կամեցողի ներքին աշխարհում առաջ է բերում մի փոփոխութիւն։ Այն փոփոխութիւնները, որոնք տեղի են ունենում արտաքին աշխարհում, առաջ են գալիս մեր սեփական մարմնի շարժումների օգնութեամբ։ Կամքի ազդեցութեամբ առաջացած այս փոփոխութիւններով շատ հեշտ է հետևել կամքի տարբեր աստիճաններին։ Իսկապէս կամեցողութեանը պատկանում է մի կողմից այն նպատակի պատկերացումը, որին պիտի հասնել, իսկ միւս կողմից այն միջոցների ընտրութիւնը, որոնց շնորհիւ կարելի է հասնել այդ նպատակին, բայց սա երկար զարգացման հետևանք է։

Մարդս չէր կատարի երբէք և ոչ մի կամաւոր շարժում, եթէ նա սկզբում կատարած չլինէր այնպիսի շարժումներ, որպիսիք նա ինքը չկամենար։ Արդէն այն նեարդային զրգիռները, որոնք առաջանում են նիւթերի փոխանակու-

մից (Stoffwechsel), պէտք է առաջ բերեն անկամ շարժումներ, որովհետև ամբարուած էնէրգիան պէտք է շարժումների մէջ ծախսուի։ Այսպէս օրինակ՝ մարդ ատամները կցում է, երբ զգում է որևէ ցաւ. կամ եթէ սաստիկ գրգռուած է, շատ անգամ բոլորովին աննպատակ շարժումներ է կատարում։ Երեխան ըմբռնելով իր սեփական աւտոմատ շարժումները, ինչպէս օրինակ՝ ձեռքերի շարժումները, աստիճանաբար այն գիտակցութեան է գալիս որ ինքը կարող է ազդել այդ շարժումներին։

Այսպիսի անկամ շարժումներն էլ կատարուում են որևէ գրգռի ազդեցութեան տակ։ Եթէ աչքին հարուած է սպառնում, ապա կոպերն անկամ կերպով փակուում են։ Երբ մի կողմնակի իր ընկնում է շնչափողի մէջ, ապա մարդ սկսում է հազալ, առանց յատուկ կամքի գործողութեան կարիք զգալու։ Զգացող (sesibl) նեարդերը մի տեսակ լուր են հաղորդում սպառնացող վտանգի մասին կենդրոնական օրգաններին, որոնք առանց մեր հոգու գործակցութեան, որոշ ազդեցութիւն են գործում շարժող (motorisch) նեարդերի վրայ, և սոքա էլ առաջացնում են այն շարժումը, որը պիտի պաշտպանի օրգանիզմը սպառնացող վտանգից։ Որ այս, այսպէս կոչուած, ռեֆլեկսիւ շարժումները կապ չունեն մեր դատողութեան հետ, երևում է օրինակ, նրանից, որ այդպիսի շարժումներ կատարում են նաև այնպիսի կենդանիներ, որոնց զրկած ենք

լինում ուղեղից։ Գլխատած գորտը իւր ոտքով սրբում է մորթու վրայ լցրած թթուջրի կաթիլը։ Իսկ այդպիսի գորտն ընդհանրապէս անշարժ է մնում, որովհետև կորցնում է ինքնուրոյն շարժում առաջ բերելու ընդունակութիւնը։ Մարդու ռեֆլեկսիւ և կամաւոր շարժումները կարելի է տարբերել միմեանցից, այսպէս կոչուած, «բնախօսական ժամանակի» վրայ կատարած հետազօտութեամբ։ «Բնախօսական ժամանակ» մենք կոչում ենք այն ժամանակը, որը տևում է գրգռի սկսուելուց մինչև նրա առաջ բերած շարժման սկիզբը. օրինակ՝ այն ժամանակը, որ անցնում է տեսողութեան զգայութիւնն ստանալուց մինչև սրան համապատասխանող ռէակցիան։ Միջին թուով հաշուած, բնախօսական ժամանակը հաւասար է $^1/_5$ վայրկեանի։ Դիտողութիւնը մեզ ցոյց է տալիս, որ ռեֆլեկսիւ շարժումների դէպքում բնախօսական ժամանակը աւելի քիչ է, քան կամաւոր շարժումների. այնպէս որ սենսիբել նեարդերի միջոցով գրգռի առաջնորդուելու և մոտոր նեարդերի օգնութեամբ շարժում առաջ բերող պատուէրի առաջնորդուելու միջև անցնում է մի որոշ «կամքի ժամանակ» (Willenszeit), որը գործադրւում է կամքի վճիռ առաջ բերելու վրայ։ Էլէքտրական հոսանքից առացած գրգռի և դրան համապատասխանող ջղաձգութեան միջև աւելի կարճ ժամանակ է տևում, քան վայրկեանացոյց պաքի շարժման սկիզբը ցոյց տուող տեսողութեան զգայութեան և մատի ճնշման,

որը էլէքտրական հոսանքի ընդհատմամբ պաքը կրկին կանգնեցնում է։

Ռեֆլեկսիւ շարժումները նոյնպէս կարող են զսպուել։ Այս տեղի է ունենում կամ այն դէպքում, երբ զգացող նեարդերը գրգռի հետ միաժամանակ ստանում են որ և է ուրիշ գրգիռ, կամ թէ այն դէպքում, երբ հանդէս է գալիս գիտակցական կամքը։ Այսպէս օրինակ՝ կուլ տալու ռեֆլեկսիւ շարժողութիւնը կարող է զսպուել թէկուզ վախից ասաջացած նեարդային գրգռի շնորհիւ. ճիշտ այսպէս էլ գիտակցական կամքը կարող է մէկին արգելել վախենալու ժամանակ ցնցուել։ Ողնաշարի ուղեղը հանդիսանում է որպէս կենդրոնական օրգան ռեֆլեկսիւ շարժումների։ Ռեֆլեկսիւ շարժումների դերը պակասում է ազատակամ շարժումների օրգան հանդիսացող մեծ ուղեղի զարգացմամբ։ Ինքնազբսպումը մեծ մասամբ նրանում է կայանում, որ ռեֆլեկսիւ շարժումները զբսպւում են։

Բնազդային շարժումները պարզ ռեֆլեկսիւ շարժումներից տարբերւում են նրանով, որ նոքա աւելի բարդ և աւելի ակտիւ են քան այս վերջինները։ Նոքա հանդէս են գալիս որպէս մի հեռաւոր նպատակի հասնելու միջոցների բարդ սիստեմ. բայց նպատակը նախօրօք չի գիտակցւում։ Թռչունը ոչ մի պակերացում չի ունենում բնի մասին, երբ սկսում է շինել այն, կամ թէ մեղուն խորիսխի մասին. այլ նոքա առաջնորդւում

են աղօտ մարմնական զգացմունքներով, որոնք պէտք է համարուին որպէս բնածին և սերնդէ սերունդ անցնող ցեղական յատկութիւններ։

Այս մասին պէտք է վերագրել նաև շարժումների մի ամբողջ շարք, որոնք կատարուում են թէև առանց իսկական կամքի գործողութեան, բայց և միաժամանակ բղխում են ոչ թէ օրգանիզմի յատուկ նպատակայարմար կազմից, այլ հենց շարժման մտապատկերից։ Մենք այստեղ այնպիսի շարժումներ ինկատի ունինք, որոնք առաջ են գալիս նմանուելուց։ Յաճախ մարդիկ յակամայից նմանուում են այնպիսի շարժումների, որի պատկերն ուժգին կերպով հանդէս է գալիս։ Որ և է սուսերամարտի կամ ծաղրածուի գործողութիւնները դիտելիս անկիրթները պատասխանում են նոյնպէս թեթև շարժումներով։ Նոյն իսկ մի կենդանի նկարագրութեան ընթերցումը կարող է առաջ բերել անկամ շարժումներ։ Աւելի յաճախ կարելի է դիտել այն աչքի չդարնող իրողութիւնը, որ մարդիկ նմանուում են ուրիշին շարժումներով կամ դէմքի արտայայտութեամբ, ամենևին այդ բանին ուշադրութիւն չդարձնելով և նոյն իսկ մտածելով բոլորովին այլ բանի մասին։ Բայց այս բոլոր նմանողական շարժումները քաղաքակրթութեան զարգացմամբ յետ են մղուում, որովհետև մարդս վարժուում է ինքնազսպման։

Հակումն եւ իսկական կամք.

Հակումով մենք մի քայլ ևս մօտենում ենք բուն կամեցողութեանը։ Հոգեկան կեանքի զարգացումը որքան աւելի առաջ է գնում, այնքան էլ նրա տարբեր տարբերն աւելի սերտ են կապուում միմեանց հետ։ Այսպէս՝ հակումը տարբերուում է բնազդից նրանով, որ հակման դէպքում արդէն քիչ թէ շատ խոշոր դեր է խաղում այն բանի մտապատկերը, որին մենք ձգտում ենք։ Եթէ հակումն այնքան է զօրեղանում, որ տիրում է մարդուն ամբողջապէս և սկսում է իշխել նրա մտածողութեան ու կամեցողութեան վրայ, ապա այդ դէպքում առաջանում է բուռն ձգտումն, բուռն հակումն։

Վերոյիշեալից հետևում է, որ մեր հակման բաւարարութեան հետևանք հանդիսացող ապագայ հաճոյքի զգացմունքի և այդ հակումից առաջացած շարժումների մէջ պէտք է որոշ ժամանակամիջոց անցնի։ Ուրիշ խօսքով՝ նպատակը որոշ ժամանակամիջոցով բաժանուում է այն միջոցներից, որոնք ծառայում են այդ նպատակին հասնելու համար։ Բնազդը տանում է մեզ միայն այն վայրկեանական զգացմունքների շրջանը, որոնք ուղեկցում են տուեալ շարժմանը, իսկ հակման ժամանակ մեր առջևն է կանգնում այն նպատակի մտապատկերը, որի հետ պիտի կապուի տուեալ զգացմունքը։ Այս տեսակէտից կարելի է տարբերութիւն դնել, օրինակ, մրջիւնի ճարպ-

կութեան և գեղարուեստագէտի ստեղեագործող հակման միջև։

Այսպիսով տուեալ շարժումը կատարելու համար իբրև դրդապատճառ (Motiv) հանդիսանում է այն հաճոյքի զգացմունքը, որը կապւում է դրած նպատակի հետ։

Եթէ այդ զգացմունքը իսկոյն դրդապատճառ չի դառնում, այսինքն՝ եթէ մեզ անմիջապէս չի դրդում դէպի շարժման, ապա նա հանդիսանում է որպէս ցանկութիւն։ Եթէ միմեանց կողքին հակման մի քանի առարկաներ են յայտնւում, այնպէս որ մեր առանձին յատուկ հակման առարկային մենք հասնում ենք ոչ անմիջապէս, ապա այդ ժամանակ արդէն մեր մտածողութիւնը ոչ միայն պիտի զբաղուի նպատակին հասնելու միջոցների ընտրութեամբ, այլ և պէտք է վճռի, թէ դրդապատճառներից որ մէկին առաւելութիւն պիտի տրուի. այս դէպքում ի հարկէ գլխաւոր դեր է խաղում տուեալ դրդապատճառների ունեցած գնահատութիւնը մեր զգացմունքի նկատմամբ. և այն, ինչ որ մեր զգացմունքի համար գնահատելի է երևում, դառնում է մեզ համար վերջնական նպատակ։ Դրդապատճառների գնահատման կշռադատութեան ժամանակ մեզ գլխաւորապէս օգնում է յիշողութիւնը, ապա մեր մէջ որոշ նպատակի հասնելու դիտաւորութիւն է առաջանում։ Այն դիտաւորութիւնը, որը մենք ցանկանում ենք ի կատար ածել, կարող է բոպէական ներքին

շարժումների հետևանք լինել. և այս դէպքում նշանակում է, որ մեր ամբողջ ներքին էութիւնը՝ մեր բնաւորութիւնը, մեր բոլոր զգացմունքներն ու մտապատկերներն ամենևին չեն գործակցել այդ դիտաւորութեան յառաջանալու գործողութեանը։ Այդ ժամանակ մեր արած ընտրութիւնը կլինի մակերևոյթային և կարող է բոլորովին փոխուել, եթէ հաշուի առնենք վերոյիշեալ բոլոր բաց թողուած գործօնները (Faktor)։ Բայց եթէ դրդապատճառների ընտրութիւնն արւում է բազմակողմանի կշռադատութեամբ, եթէ գործող անհատը կշեռքի թաթի վրայ է դնում իւր ամբողջ անձնաւորութիւնը, ապա առաջ է գալիս ոչ թէ հասարակ դիտաւորութիւն, այլ վճիռ, որը կամքի ամենաբարձր արտայայտութիւնն է և իսկական կամքի գործողութիւնը։ Վերևում խօսելով հակման մասին, մենք մատնանշեցինք այն հանգամանքի վրայ, որ այստեղ մտքի և իւր գործադրման միջև պէտք է որոշ ժամանակամիջոց անցնի։ Ահա այդ ժամանակամիջոցը այնքան աւելի երկար կլինի, որքան մենք աւելի մօտենանք իսկական կամքին, իսկական կամեցողութեանը։ Իրօք, դրդապատճառներին որքան աւելի շատ ժամանակ հարկաւորի արտայայտուելու համար, և որքան շատ ժամանակ տրուած լինի մեզ այդ դրդապատճառներին նշանակութեան գնահատութեան համար, այնքան աւելի քիչ կարելի է ասասել, որ վճիռն ընդունուի միայն որևէ մէկ դրդապատճառի անմիջական ազդեցութեան

տակ, և այնքան աւելի շատ հաւանական է որ մեր վճիռը ենթարկուած կլինի վստահելի կըշռադատութեան։ Կամքի այս տարբեր ձևերի միջև եղած սահմանները խստիւ կերպով չեն գծուած. նոքա փոփոխական են. բայց այդպիսի սահմաններ ընդունելն անհրաժեշտ է մեզ համար, յատկապէս մարդկանց գործերի բարոյական և իրաւական գնահատման դէպքում։

Կամքի գործողութեան որպիսի հոգեկան երևոյթ լինելն աւելի մօտ չի կարելի որոշել. այդ կարելի է իմանալ միայն փորձից։ Ճիշտ այսպէս էլ չի կարելի մանրամասն հետազօտել այն հարցը, թէ այն, ինչ որ առաջ միայն որպէս լոկ ցանկութիւն հնարաւոր էր, ինչպէս է, որ յանկարծ մեր աչքում դառնում է իբրև այնպիսի բան, որին մենք պէտք է հասնենք որոշ գործողութիւնների օգնութեամբ։ Բացի դրանից մենք չգիտենք, թէ ինչպէս է կամքի գործողութիւնը փոխւում շարժման, շարժողներարդերի շնորհիւ ինչպէս է կամքը շարժման մէջ դնում մեր մկանները։ Մենք ըմբռնում ենք միայն մեր ներքին վիճակը, որի մէջ մտնում է մի կողմից կատարուելիք շարժման մտապատկերը, իսկ միւս կողմից՝ տուեալ շարժումը կատարելու հրամանը պարունակող յատուկ գործողութիւնը։ Մնացածը վերաբերում է մեր ներքին փորձին. բայց և այնպէս, այն շարժումը, որ մենք ուզում էինք, ի կատար է ածւում. սա նշանակում է, որ այդ շարժումը որոշ օրինաչափական

եղանակով կապուած է մեր ներքին վիճակի հետ, և որ նոցա կապող միջնորդ անդամն անմատչելի է մեր գիտակցութեանը։

Կամքի ազատութիւնը.

Գործնական կեանքում միշտ ենթադրւում է, թէ այն բոլէին, երբ մարդ որոշ վճիռ է կայացնում, նրա կամքն ազատ է. այսինքն՝ հենց նոյն այդ բոլէին մարդը կարող էր որ և է ուրիշ վճիռ կայացնել։ Այս ձևի ինդետերմինիզմին, որը իւր ներկայացուցիչներն է ունեցել նաև գիտութեան մէջ, հակադրւում է դետերմինիզմը, որը մերժում է կամքի այս ձևի ազատութիւնը։ Ինդետերմինիզմի և դետերմինիզմի հարցի լուծումը միայն ինքը՝ հոգեբանութիւնը չի կարող տալ. այստեղ մի կողմից բարոյագիտութիւնը պէտք է հետազօտութիւն կատարի, որոշելու թէ կամքի ազատութիւնը արդեօք բարոյական գիտակցութեան համար անհրաժեշտ պահանջ է, իսկ միւս կողմից բնազանցագիտութիւնը՝ որոշելու թէ արդեօք կամքի ազատութիւնը մտածելի՞ է տիեզերական երևոյթների ընդհանուր շղթայի մէջ։ Այն հայեացքները, որոնցով մարդկային կամքն ամբողջովին անզօր է (ինչպիսին է ճակատագրականութիւնը), հոգեբանութեան շրջանից բոլորովին դուրս են ընկնում։ Հոգեբանութեան տեսակէտից յօգուտ

և ի վնաս դետերմինիզմի և ինդետերմինիզմի հետևեալը կարելի է ասել.

1) Դետերմինիզմը յայտարարում է՝—հաստատելով կամքի ազատութիւնը, մենք հենց դրանով աշխատած կլինենք ոչնչացնել պատճառականութեան օրէնքը, ըստ որի ամեն մի երևոյթ պիտի ունենայ իւր պատճառը. այս օրէնքը ոչընչացնելով մենք ոչնչացնում ենք նաև այն կապը, որը գոյութիւն ունի մեր գիտակցութեան կեանքի և ամբողջ աշխարհի միջև։ Ինդետերմինիզմը սրան առարկում է, թէ բնագիտական պատճառականութեան օրէնքի ունեցած ազդեցութիւնը մարդու հոգեկան կեանքի վրայ դեռ չի հաստատուած. իսկ եթէ այդ չի ապացուցուած, ապա և չի կարելի կամայական կերպով ընդունել։

2) Ինդետերմինիզմը մատնանշում է մի քանի հոգեբանական իրողութիւններ, որք են՝ մեր մէջ գոյութիւն ունեցող ազատութեան և պատասխանատուութեան գիտակցութիւնը, զղջման զգացմունքը, որոնք կարող են բացադրուել միայն ընդունելով այն ենթադրութիւնը, թէ մարդս իրերի տուեալ դրութեան ժամանակ իսկապէս կարող էր գործել ոչ այնպէս, ինչպէս որ նա գործեց։ Դետերմինիզմը այս իրողութիւնները բացադրում է նրանով, որ գործող անձը հաշուի չի առնում իւր ընաւորութեան առանձնայատկութիւնը, և այսպիսով նրան թուում է, որպէս թէ դրդապատճառների ընտրութեան դէպքում նա վարուել է բոլորովին ազատ. մինչդեռ իրօք

այդ ընտրութիւնը եղել է, եթէ ներքին հարկադրութիւնից անկախ, յամենայն դէպս ընաւորութեան այդ առանձնայատկութիւնների հիման վրայ. այնպէս որ ընտրութիւնը կարող էր արուել միայն որոշ ուղղութեամբ։ Վատ արարքը յեշելիս մարդ իրեն դատապարտում է և ցանկանում է, որ այդ վարմունքը եղած չլինէր։

Ներքին վիճակներ արտայայտող շարժումներ.

Կան շարժումներ, որոնց առանձնայատկութիւնը կայանում է մարդու որ և է ներքին վիճակն արտայայտելու մէջ։ Նոքա հանդիսանում են որպէս արտաքին նշաններ որոշ ներքին վիճակների։ Այս շարժումները կամաւոր և անկամ շարժումներից բոլորովին տարբեր չեն։ Նոքա միշտ լինում են կամ կամաւոր կամ թէ անկամ։ Բայց մենք սոցա պէտք է առանձին ուսումնասիրենք, քանի որ հոգեկան կեանքի ամեն մի զարգացում հիմնուած է մարդկանց փոխադարձ յարաբերութիւնների վրայ, իսկ այս փոխադարձ յարաբերութիւնները հնարաւոր են միայն մարդկանց զգացմունքներն արտայայտող շարժումների միջոցով։ Զգացմունքների ներքի արտայայտութիւն հանդիսացող մարմնական շարժումները կոչւում են նաև Gebärde (շարժմունք, ժեստ)։

Կարելի է տարբերել ներքին վիճակների արտայայտութիւն հանդիսացող շարժումների երեք տեսակներ. բայց այս դէպքում չպէտք է մոռանալ, որ այդ երեք տեսակներն էլ միշտ միաժամանակ կարող են գոյութիւն ունենալ, և որ նոքա յաճախ ընթացակցում են միմեանց։

1) Առաջին տեսակին են պատկանում այն բոլոր շարժումները, որոնք անմիջական կերպով ծառայում են զգացմունքի զօրեղ յուզմունքի արտայայտութեան համար։ Այս ձևի շարժումների մասին մենք արդէն յիշատակել ենք, երբ խօսում էինք ռեֆլեկսիւ շարժումների մասին, որտեղ ցոյց տուեցինք, որ սոցա օգնութեամբ է արտայայտւում ներքին լարուածութիւնը։ Այսպիսի շարժումներ լինում են այն ժամանակ, երբ գունատւում ենք կամ կարմրում, ծիծաղում ենք կամ լաց լինում։ Ծիծաղը մարմնական, յատկապէս հոգեկան, բաւականութեան արտայայտութիւն է, երբ նա առաջանում է խիստ հակադրութիւնների, օրինակ՝ կարճ ու հաստ և երկար ու նիհար մարդկանց հակադրութիւններից։ Նոյն ձևով էլ սրամտութիւնն է հիմնւում «լարուած սպասողութեան ոչնչի փոխուելու» վրայ (Կանտ)։ Այս երևոյթների պատճառը կարող է լինել այն, որ մարդկային հոգու հիմնական կարիքը՝ շարժուելու կարիքը, յատկապէս լիովին բաւարարութիւն է ստանում հակադրութիւններով։ Ծիծաղն արտայայտւում է ընդհատ ընդհատ շնչառութեամբ, որն ընդհատւում է ներշնչելու միջոցին։ Լացը ծառայում է որպէս արտայայտութիւն որևէ մարմնական կամ հոգեկան ցաւի. նրան իբրև գլխաւոր նշան հանդիսանում է արտասուքի գեղձերից ջուր հոսելը։ Սակայն այս երկու երևոյթներին էլ ընթացակցում են դէմքի մկանների շարժումները, որոնք երկրորդ տեսակի մէջ կպարզաբանուեն։

2) Երկրորդ տեսակը կազմում են այն շարժումները, որոնք արտայայտում են մեր զգացմունքները՝ նման զգայութիւնների զուգորդութեան օգնութեամբ։ Այսպէս օրինակ՝ այն զգացմունքները, որոնք մենք լեզուով արտայայտում ենք՝ «դառը», «թթու», «քաղցրը» բառերով, իրենց արտայայտութիւնը գտնում են նաև մեր բերանի շարժումների մէջ, որոնք ընդհանրապէս կապուած են համապատասխան ճաշակի զգայութիւնների հետ։

3) Երրորդ տեսակին պատկանում են այն շարժումները, որոնք ծառայում են մտապատկերներ արտայայտելու համար. սոքա անուղղակի կերպով կարող են ծառայել նաև զգացմունքներ արտայայտելու համար։ Մտապատկերների արտայայտութիւն հանդիսացող ամենապարզ շարժումներ անում ենք, օրինակ այն ժամանակ, երբ ձեռքով ցոյց ենք տալիս այն մարդկանց կամ այն առարկաները, որոնց մասին մենք այս կամ այն դէպքում խօսում ենք։ Ճիշտ այսպէս էլ մենք, խօսելով որ

և է առարկայի մասին, շատ յաճախ աշխատում ենք նրան պարզ կացուցանել զանազան ժեստերի օգնութեամբ, որոնք մի տեսակ նկարում են այդ ամբողջ առարկան կամ նրա աչքի ընկնող կողմերը։ Այս դէպքում շատ յաճախ արտայայտւում է նաև որ և է զգացմունք. այսպէս օրինակ՝ բռունցքը սեղմելով մենք յաճախ յարձակման մտապատկեր ենք առաջացնում և սրանով արդէն անուղղակի կերպով արտայայտում ենք մեր բարկութիւնը դէպի մեզ վիրաւորողը։

Բայց ներքին վիճակներ արտայայտելու համար շարժումների ամենագլխաւոր ձևն է մեր լեզուն, որտեղ մտապատկերներն արտայայտւում են խօսելու օրգանի շարժումներով և դրանից առաջացած հնչիւններով։ Միայն վերոյիշեալ առաջին և երկրորդ ձևի շարժումները ժամանակի ընթացքում փոփոխւում են։ Սկզբնապէս լեզուն, ամենայն հաւանականութեամբ, եղել է խօսելու գործարանի անկամ շարժումներ, որոնք կրել են ռեֆլեկսիւ շարժումների բնաւորութիւն. այս ռեֆլեկսիւ շարժումների օգնութեամբ, որոնց ընթացակցել են որոշ ժեստեր, անհատն արտայայտել է այն տպաւորութիւնը, որ գործել են նրա վրայ շրջապատի առարկաները։ Խօսելու գործարանի այս շարժումները հիմնուել են, կարող է պատահել, հնչիւնի և պատկերի մէջ եղած որ և է անորոշ փոխադարձ յարաբերութիւնների վրայ։ Հնչիւնանմանութիւնը (Schallnachahmung) որից, այսպէս կոչուած օնոմատոպոէտիկական տեսութեան պաշտպանները բղխեցնում են լեզուի ծագումը, թերևս լինի նման ձևով առաջացած ձայների միայն երկրորդական մասը։ Ժեստերը, որոնք սկզբում ընթացակցում էին խօսուածքին և ծառայում որպէս զգացմունք պարզաբանելու միջոց, յետագայում աստիճանաբար յետին տեղը բռնեցին, և բառը փոխուեց պարզ նշանի. այնպէս որ նրան կարելի էր գործածել ընդհանուր մտապատկերներ և վերացական գաղափարներ արտայայտելու համար, որոնց չեն համապատասխանում կոնկրէտ առարկաներ։ Նոյնպիսի պրոցէս է տեղի ունեցել և մեր գրերի զարգացման մէջ. սկզբում գրերը արտայայտում էին առարկաների ձևով, իսկ յետոյ այդ ձևերն աստիճանաբար փոխուեցին ինքնուրոյն նշանների՝ տառերի։ Այսպէս լեզուն դարձաւ մտքեր զանազանելու և փոխանակելու համար, ինչպէս և ընդհանրապէս մտածողութեան զարգացման համար անհրաժեշտ և լաւ միջոց։

Ներքին վիճակներ արտայայտող շարժումներն առաջանում են միշտ որ և է ներքին վիճակից։ Ճիշտ է որ դերասանն աշխատում է առաջ բերել այդ շարժումներն արուեստական ճանապարհով, այսինքն՝ առանց ներքին կամ արտաքին բնական գրգռի, բայց մենք բոլորս գիտենք, որ դերասանը միայն այն ժամանակ է կարող բաւարարութիւն տալ նրան առաջադրուած բարձրագոյն պահանջին՝ ներկայացնել կեանքը հարազատօրէն, երբ նա կարող կլինի ար-

հեստական կերպով իր մէջ առաջ բերել այն ներքին վիճակը, որը կհամապատասխանի նրա դերի բառերին ու ժեստերին։ Եթէ նա բառերը և ժեստերն անգիր է արել զուտ մեքենայօրէն, ապա նրա խաղը կլինի «շինծու», քանի որ նա չի «արտայայտի» իսկական ներքին վիճակը։

Վարժութիւն, սովորութիւն, բնաւորութիւն։

Մենք արդէն մի քանի անգամ խօսեցինք այն մասին, թէ մեր հոգեկան կեանքի համար ինչպիսի կարևոր նշանակութիւն ունի կրկնութիւնը։ Եթէ կրկնութիւնը նպատակ է ունենում հասնելու աւելի հմտութեան, նա կոչւում է վարժութիւն։ Յաճախակի կրկնութեան հետևանքը լինում է սովորութիւն։ Եթէ մենք յաճախ կրկնում ենք զուգորդման միջոցով կապուած մտապատկերների ամբողջ շարքեր, ապա իւրաքանչիւր անգամ աւելի հեշտութեամբ ենք վերարտադրում այդ մտապատկերները, և վերջ ի վերջոյ միջանկեալ անդամները բոլորովին անհետանում են մեր գիտակցութիւնից։ Սրան իբրև օրինակ կարելի է բերել հեռաւորութեան ըմբռնումը, որն սկզբնապէս բաղկացած է մեզ թուացող մեծութեան ըմբռնումից, այդ թուացող մեծութեան ու իսկական մեծութեան համեմատութիւնից և վերջնական հետևանքի հաստատութիւնից։ Վարժութեան միջոցով մենք այնպէս ենք սովորում այս հաշիւները անել, որ հենց բաց ենք թողնում միջնորդ անդամները, մեզ թւում է, թէ մենք հեռաւորութիւնն ըմբռնում ենք ամենաանմիջական ձևով։

Նոյնը կարելի է ասել նաև շարժման մտապատկերների մասին և, հետևապէս, հենց այն շարժումների մասին, որոնք կատարւում են կամքի ազդեցութեամբ։ Շարժող նեարդերի պրոցէսը և մկանների աշխատանքն աւելի հեշտանում և արագանում են ամեն մի կրկնողութիւնից յետոյ։ Իբրև գեղեցիկ օրինակ այն բանի, թէ ինչպէս է մտապատկերը սովորութեան շնորհիւ միանում շարժման հետ, կարող է ծառայել լեզուն։ Այստեղ մեր գիտակցութեան համար մտապատկերը, խօսքի հնչիւնը և գրաւոր նշանը համարեա թէ ձուլւում և կազմում են մի ամբողջական մտապատկեր. այնպէս որ այս տարրերից մէկն ու մէկը առաջ է բերում է նաև միւսները։ Երբ մենք գրում ենք, այն ժամանակ մեր առաջ բերած մտապատկերներին կցորդւում են համապատասխան գրաւոր նշանների և սոցա առաջացնելու համար անհրաժեշտ շարժումների պատկերները. շարժող նեարդերի միջոցով մենք շարժման մէջ ենք դնում մկանների համապատասխան վնջեր (Muskelgruppe), որպէս զի թղթի վրայ գրենք այդ նշանները. այս բոլորին կից միշտ մեր մէջ առաջանում են գրուած բառերին համապատասխան հնչիւնների մտապատկերներ։

Շարունակ կրկնուելու պատճառով մենք այնպէս ենք վարժուել այս ամբողջ բարդ պրոցէսին, որ նա մեզ երևում է որպէս մի ամբողջական գործողութիւն (Akt)։ Նոյնը կարելի է ասել նաև ուրիշ բարդ շարժումների մասին, ինչպէս՝ խօսելը, դաշնամուր նուագելը, գրաշարի բանելը։

Որքան աւելի ենք վարժւում մի բանի մէջ, այնքան աւելի հեշտ և արագ ենք կատարում շարժումները և այնքան աւելի քիչ ենք կարիք զգում իւրաքանչիւր առանձին շարժման համար կամքի յատուկ լարման. այնպէս որ արդէն մի անգամ սկսած շարժումների շարքն ընթանում է բոլորովին առանց մեր կամքի գործակցութեան։ Կամքի առանձին գործողութիւն է պահանջւում միայն շարժման սկզբին և վերջին, նոյնպէս և արգելքներ առաջանալու դէպքում։ Բայց պէտք է ընդունել, որ ամեն դէպքում էլ կամքը մեզ գործակցում է, թէև շատ անգամ չնչին չափով։ Երբ մենք քայլում ենք, իրօք թւում է, թէ կամքն այստեղ դեր է խաղում միայն այն ժամանակ, երբ սկսում ենք քայլել, և մէկ էլ այն ժամանակ, երբ կանգ ենք առնում։ Բայց, իրօք, պէտք է ընդունել, որ կամքի գործունէութիւնն անհրաժեշտ է նաև ջղերի մշտական լարման համար, որոնք մեզ ստիպում են որոշ ուղղութիւն բռնել։ Այս պրոցէսի մէջ մշտական վարժութիւնների շնորհիւ մեր գիտակցութիւնից անհետանում են մի-

ջանկեալ անդամները ճիշտ այնպէս, ինչպէս և ուրիշ պրոցէսների դէպքում։

Սովորութիւնը, որի շնորհիւ տնտեսւում է մեր կամքի լարուածութիւնը, հանդիսանում է մեր առօրեայ կեանքի գերիշխող տարրը։ Որոշ ոյժով նա հանդէս է գալիս մեր վարմունքների մէջ։

Կազմուածքի և դաստիարակութեան ազդեցութեան տակ մարդու համար մշակւում է գործելու սովորական ձև՝ բնաւորութիւն։ Մարդու մէջ որոշ բարոյական օրէնքների կազմուելը նրա համար շատ մեծ նշանակութիւն ունի, որովհետև այդ դէպքում նրա արարքներն այլևս այնպէս հեշտութեամբ չեն ենթարկւում բոպէական դրդապատճառների ու շարժառիթների ազդեցութեան։ Միայն այն ժամանակ, երբ մարդու առաջ կանգնում են նոր և անսովոր խնդիրներ, և երբ տարբեր հիմնական օրէնքներ են հանդէս գալիս միմեանց դէմ ու դէմ, նորից սկսւում է տարբեր դրդապատճառների բազմակողմանի կշռադատութիւնը, և ազատ կամքը նորից ընտրութիւն է անում տարբեր դրդապատճառների միջև ու որոշ վճիռ արձակում։

ՀԱՏՈՒԱԾ III.

ՀՈԳՈՒ ՏԱՐԲԵՐ ՏԱՐՐԵՐԻ ՄԻՄԵԱՆՑԻՑ ՈՒՆԵՑԱԾ ԿԱԽՈՒՄԸ

Տարբեր տարրերի միմեանցից ունեցած կախումը.

Մինչև այժմ մենք ուսումնասիրում էինք հոգեկան տարրերը միմեանցից անկախ։ Իրականութեան մէջ այդ տարրերը երբէք գոյութիւն չունին զատ զատ, և մենք շատ անգամ առիթ ունեցանք անցեալ գլուխներում նոցա մէջ եղած փոխադարձ յարաբերութիւնը ցոյց տալու։ Այստեղ մենք կամենում ենք աւելի մանրամասն կանգ առնել այդ փոխադարձ յարաբերութիւնների վրայ։

1) Իմացութիւնը կախուած է մեր զգացողութիւնից և կամեցողութիւնից։ Զգացմունքն այն գլխաւոր միջոցն է, որի օգնութեամբ մենք մտապատկերները պահում ենք մեր յիշողութեան մէջ, որովհետև նա հետաքրքրութեան միջոցով կապում է այդ մտապատկերներն անհատի հետ։ Իրօք, եթէ մենք մշտապէս ճշմարտութիւն ենք փնտռում, ապա այդ առաջանում է նրանից, որ

մեր իմացութիւնը կապուած է հաճոյքի և տհաճութեան զգացմունքների հետ։ Հենց սրա համար էլ մենք իմացութեանն այնպիսի արժէք ենք վերագրում, առանց որի մենք թերևս կատարելապէս անտարբերութեամբ անձնատուր լինէինք մեր մտապատկերների ընթացքին։ Մենք միայն այն ժամանակ կարող ենք իմացութիւն ձեռք բերել, երբ, այսպիսով, կկեդրոնանանք որոշ մտապատկերների վրայ. իսկ կենդրոնանալը հնարաւոր է միայն կամքի օգնութեամբ, որը մեր ուշադրութիւնն ուղղում է դէպի հետաքրքրելի առարկան։

2) Զգացմունքը կարող է զարգանալ միայն մտապատկերների և կամքի գործողութիւնների աջակցութեամբ։ Զգացմունքներն ըստինքեան չափազանց անորոշ են, ուստի չի կարելի նոցա պարզ ձևով որակել։ Միայն այն ժամանակ կարելի է խիստ տարբերել մի զգացմունք միւսից և նոցա միմեանց հետ համեմատել, երբ մենք կկապենք այդ զգացմունքները այն մտապատկերների հետ, որոնց շնորհիւ նոքա առաջ են եկել։ Ճիշտ այսպէս էլ զգացմունքների մասին պարզ յիշողութիւն հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ մենք կվերարտադրենք նոցա հետ կապուած մտապատկերները։ Եւ եթէ մենք կամենում ենք, որ մեր բարձր զգացմունքները՝ բանական, գեղագիտական, բարոյական, կրօնական, դառնան պարզ և որոշ, ապա մենք պէտք է նոցա բո-

վանդակալից դարձնենք և մտածողութեան օգնութեամբ դուրս հանենք նոցա միջից առարկաների մասին մեր ունեցած գաղափարների հիմնական օրէնքները. այս հիմնական օրէնքները, իրենց հերթին, կրկին ազդեցութիւն ցոյց կտան մեր զգացմունքի վրայ և կպահեն նրան ամեն տեսակի անբնական շեղումներից։ Այստեղ մեզ օգնութեան պիտի գայ և մեր կամքը։ Իսարկէ կամքի գործողութեան օգնութեամբ մենք չենք կարող անմիջապէս արգելել որ և է զգացմունքի առաջ գալը, չենք կարող նաև ոչնչացնել արդէն գոյութիւն ունեցող որ և է զգացմունք։ Բայց մենք հնարաւորութիւն ունենք կողմնակի ձևով ազդելու նրա վրայ, կարող ենք զսպել այն շարժումները, որոնցով արտայայտւում է տուեալ զգացմունքը, կարող ենք նաև յետ վանել այն մտապատկերները, որոնցով սնւում է զգացմունքը։ Այսպէս՝ մենք որոշ դէպքերում կարող ենք մեր մէջ զսպել բարկութիւնը, թոյլ չտալով, որ նա արտայայտուի. գլխաւորապէս սրանում էլ հենց կայանում է ինքնազսպումն ասուածը։ Եթէ մենք փոխենք այն մարդու ներքին կեանքի պայմանները, որը սասաիկ վշտի ազդեցութեան տակ է գտնւում, եթէ մենք նրան տեղափոխենք նոր մտապատկերների աշխարհ, ապա հենց սրանով էլ մենք հնարաւորութիւն կունենանք փոխելու նրա տրամադրութիւնը։ Ընդհանրապէս մեր ամբողջ զգացմունքային կեանքը այն ժամանակ կդառնայ

առողջ, երբ մենք զգացմունքը կստորադասենք կամքին։

3) Կամքն առանց մտապատկերների և զգացմունքների անմտածելի է։ Նա կարիք է զգում մի նպատակի, որի իրագործմանը և ձգտում է։ Եւ եթէ այդ նպատակը մեր կամքի համար չունենար ոչ մի գնահատութիւն, այսինքն՝ կապուած չլինէր հաճոյքի զգացմունքի հետ, ապա այդ դէպքում մեր կամքը բոլորովին անտարբեր կվերաբերուէր դէպի նա։ Բացի դրանից մենք չենք կարող հասնել որ և է նպատակի, եթէ չիմանայինք դէպի այդ նպատակը տանող միջոցները. իսկ միջոցներ իմանալը բղխում է մեր մտքից։ Վերջապէս եթէ կամքի գործողութիւնների շարքը պէտք է ունենայ որոշ համաչափ յաջորդականութիւն, ապա անհրաժեշտ են հաստատուն հիմնական օրէնքներ, որոնք տարածուէին մտածողութեան պրոցէսից մինչև կամքի գործողութիւնը։

Այսպէս մեր հոգեկան այս երեք տարրերը հիւսւում են ամենաբազմազան ձևերով։ Եւ ինչպէս որ առանձին անհատի մէջ տարբեր ժամանակներում գերադասութիւն են ստանում տարբեր տարրերը՝ երբեմն զգացմունքը, երբեմն մտածողութիւնը, երբեմն էլ կամքը, ճիշտ նոյն ձևով էլ տարբեր մարդիկ առանձին տիպի են լինում, նայած թէ նրանց մէջ միտքը, զգացմունքը, թէ՞ կամքն է գերիշխում։ Այստեղ խօսքը մտքի, զգացմունքի և գոր-

ծի մարդկանց մասին է։ Բայց բարձրագոյն ձևը միշտ կլինի իդեալական հաւասարակշռութիւնը, մարդկային հոգու բոլոր կողմերի ներդաշնակ զարգացումը։



Նկատուած վրիպակներ.

էջ	տող	տպուած է	պէտք է լինի
33	9	ուշադրունը	ուշադրութիւնը
39	4	դատողութիւններից	դատողութիւններից
40	1	(վերնագ.) աշխարնի	աշխարհի
48	1	Զգմացմունքները	Զգացմունքները
56	7	աֆֆեկտ (affekt)	յոյզ (Affekt)

Կան նաև մի քանի կետադրութեան չնչին սխալներ, բայց դրքա չուղղեցինք, ինկատի ունենալով, որ գրուածքի միտքը չեն փոխում։